**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2023 թվականի թիվ 504-Ա

## «ԻԳԻԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի նոյեմբերի 28-ի նիստում, քննարկելով «Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

***1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.***

Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 30-ի ««Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 254-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 254-Ա որոշում**) հարուցվել է թիվ ՀԳ-02031/23 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Ընկերությունը թիվ 254-Ա որոշումը ստացել է 2023 թվականի հունիսի 1-ին և 2023 թվականի հունիսի 2-ին ներկայացրել է դիրքորոշում (այսուհետ նաև՝ **Դիրքորոշում 1**):

Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 10-ի «Թիվ ՀԳ-02032/23 և թիվ ՀԳ-02033/23 վարույթների շրջանակներում զննում իրականացնելու մասին» թիվ 315-Ա որոշման (այսուհետ նաև՝ **թիվ 315-Ա որոշում**) հիման վրա իրականացվել է զննում:

Հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 15-ի ««Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02032/23 վարույթի շրջանակում փորձաքննություն նշանակելու և թիվ ՀԳ-02032/23 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 365-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 365-Ա որոշում**) նշանակվել է փորձաքննություն:

Հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 15-ի ««Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02031/23 վարույթի ժամկետը

երկարաձգելու մասին» թիվ 366-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 366-Ա որոշում**) երկարաձգվել է Վարույթի ժամկետը:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողի 2023 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 010129 գրությամբ Ընկերությանն առաջարկվել է ներկայացնել Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության (այսուհետ նաև՝ **Վարչություն)** կողմից կազմված ««Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02031/23 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքի (այսուհետ նաև՝ **Տեղեկանք**) առնչությամբ գրավոր դիրքորոշում, որն Ընկերությունը ներկայացրել է 2023 թվականի նոյեմբերի 20-ին (այսուհետ նաև՝ **Դիրքորոշում 2)**:

***2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.***

Վարչությունը 2023 թվականի մայիսի 25-ի թիվ 4586 զեկուցագրով առաջարկել է Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ՝ հայտնելով, որ.

1. անհատ ձեռնարկատեր Ավետիք Հակոբյանի (այսուհետ նաև՝ **ԱՁ Ա. Հակոբյան)** կողմից «Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն (այսուհետ նաև՝ **«Պար-Արտ» ընկերություն)** իրացված, Ընկերության կողմից 2022 թվականի նոյեմբերի 9-ին արտադրված «Շիրակ» ապրանքային նշանով, «Լոռի Excluzive» անվանումով, 50% յուղայնությամբ ապրանքը ոչ թե «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով ապրանք է, այլ «Լոռի» անվանումով պանիր (նշվածի մասին են վկայում «Պար-Արտ» ընկերության կողմից ներկայացված Ապրանքի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները), որը սակայն պարունակում է բուսական յուղ և չի համապատասխանում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 67 որոշմամբ ընդունված «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 033/2013) (այսուհետ նաև՝ **Կանոնակարգ**) պահանջներին.

2. անկախ այն հանգամանքից, նշված ապրանքը հանդիսանում է «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» արտադրանք, թե «Լոռի» անվանումով պանիր՝ դրա մակնշվածքում բացակայում է Ապրանքի անվանումը և «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվության նշումը: Ավելին, փաթեթվածքի վրա բացակայում են արտադրողի մասին տվյալները:

Վարույթը հարուցվել է Ընկերության վարքագծում հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

***3. Ընկերության դիրքորոշումը.***

Ընկերությունը Դիրքորոշում 1-ով հայտնել է, որ արտադրում է տարբեր տեսակի պանիրներ և կաթ պարունակող կաթնային յուղի փոխարինիչով մթերքներ, վերջինների թվում նաև «ԿՊՄ Գյումրի», «Շիրակ», «Չանախ», «Կումայրի», «Ազատան»: ԱՁ Ա. Հակոբյանը, այցելելով գործարան, ծանոթանալով Ընկերության կողմից արտադրվող

ապրանքատեսականու հետ, պատվիրել է կաթ պարունակող մթերք պատրաստված Չանախ պանրի տեխնոլոգիայով ապրանքը, որը պետք է փաթեթավորվեր իր իսկ կողմից տրամադրված փաթեթների մեջ: Ընկերությունը փաթեթավորման պատվերը կատարելուց հետո, մատակարարել է ապրանքը հաշիվ ապրանքագրերով, պատվիրատուին նախապես տրամադրելով ապրանքի վրա փակցվող պիտակի մակնշման օրինակը, որը ԱՁ Ա. Հակոբյանը պետք է օգտագործեր իր ընկերության պիտակի վրա ու համապատասխանեցներ Կանոնակարգի պահանջներին, իսկ ԱՁ Ա. Հակոբյանը հավաստիացրել է, որ իր կողմից փակցվող պիտակը համապատասխանեցվել է Կանոնակարգի պահանջներին:

ԱՁ Ա. Հակոբյանը Ընկերությունից գնել է նաև «Լոռի» պանիր, որը մատակարարելուց առաջ արտադրվել, փաթեթավորվել և պիտակավորվել է Ընկերության կողմից:

ԱՁ Ա. Հակոբյանի կողմից ապրանքները գնելուց հետո Ընկերությունը պարտավորություն չի կրում հետևելու մատակարարված ապրանքի վերավաճառքին, դա գործնականում հնարավոր էլ չէ իրականացնել, քանի որ Ընկերությունը բացի նշված գործընկերոջից ունի նաև այլ բազմաթիվ գործընկերներ:

ԱՁ Ա. Հակոբյանը Ընկերությունից բացի աշխատում է նաև այլ պանիր արտադրող ընկերությունների հետ:

Ընկերությունը ներկայացրել է նաև ԱՁ Ա. Հակոբյանին մատակարարված ապրանքի հաշիվ ապրանքագրերը:

Ընկերությունը Դիրքորոշում 2-ով հայտնել է, որ.

1. Ընկերությունը ձեռնպահ է մնում Տեղեկանքում նշված մի շարք փաստական տվյալների մասով դիրքորոշում հայտնելուց, քանի որ դրանք վերաբերելի չեն Ընկերությանը: Միաժամանակ Ընկերությունը խնդրում է չդիտարկել դրանք որպես ընդունելի փաստական հանգամանքներ:
2. Ընկերությունն արտադրում է ինչպես պանիր, այնպես էլ կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք, և այն հանգամանքը, որ քննարկվող ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից, ընդունելի չէ, քանի որ դրա վրա առկա պիտակավորումը և դրա փաթեթը որևէ կապ չունի Ընկերության հետ, ավելին չի բացառվում, որ այդ նույն փաթեթով շուկայում այլ արտադրանքներ ևս առկա լինեն:
3. Այն հանգամանքը, որ ապրանքը հանդիսանում է «կաթ պարունակող կաթնային փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ», Ընկերությունը նկատի է ունեցել բացառապես իր կողմից արտադրված ապրանքը:
4. Ընկերությունն ԱՁ Ա Հակոբյանին տրամադրել է մակնշման թղթային օրինակներ ընդամենն այն նպատակով, որ վերջինս կարողանա օգտվել դրանց բովանդակությունից:
5. Նշված ապրանքի փաթեթվածքի և/կամ մակնշման, դրա բովանդակության հետ Ընկերությունը որևէ կապ չունի, դրանք չեն կատարվել Ընկերության կողմից, հետևապես դրանցում առկա սխալ կամ թերի բովանդակության համար Ընկերությունը չպետք է կրի որևէ հետևանք:
6. Ընկերությունն իր կողմից մատակարարված ցանկացած ապրանք հաշվարկային փաստաթղթերում նշում է այնպես, ինչին որ համապատասխանում է տվյալ ապրանքը:

7. Ընկերության ներկայացուցիչները մասնակցել են փորձարկման վերաբերելի որոշ գործընթացի, սակայն այն հարցը, որ փորձարկման է հանձնվել Ընկերության կողմից արտադրված ապրանք տվյալ գործողությունների ընթացքում, չէր կարող հաստատվել:

8. Փորձարկման հանձնված ապրանքի պահպանման պայմանները, դրանց ժամկետների պահպանվածությունը և այլ հանգամանքներ կասկածի տակ են դնում դրա արդյունքների արժանահավատությունն ընդհանրապես և չափերի իսկության տեսանկյունից մասնավորապես:

9. Նույնիսկ Հանձնաժողովի կողմից հաստատված փաստերն իրականությանը համապատասխանելու դեպքում առկա չէ հասարակության մոլորեցում, այլ անձին այլ օրենքներով և այլ իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու հարց, որն իրականացվում է այլ օրենքով և այլ պետական մարմնի կողմից, հակառակ դեպքում Ընկերության ենթադրյալ վարքագիծը չէր կարող որակվել որպես հասարակության մոլորեցման եղանակով անբարեխիղճ մրցակցության գործողություն և առաջացնել դրանից բխող պատասխանատվություն, իսկ Ընկերության վարքագիծն իրավաչափ է:

***<u>4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.</u>***

1. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի «Հսկիչ գնում իրականացնելու մասին» թիվ 278-Ա հրամանի հիման վրա 2022 թվականի դեկտեմբերի 19-ին «Պար-Արտ» ընկերությունում իրականացվել է հսկիչ գնում (այսուհետ նաև՝ **Հսկիչ գնում**), որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 278 արձանագրությունը:

Հսկիչ գնման արդյունքում, ի թիվս այլնի, ձեռք է բերվել 2022 թվականի նոյեմբերի 9-ին արտադրված ապրանք (այսուհետ նաև՝ **Ապրանք)**, որի վրա առկա է հետևյալ մակնշմամբ պիտակ. ««Շիրակ», «Լոռի Excluzive», «09 NOV 2022», «պատրաստված է անարատ կաթից», «յուղայնությունը 50%», Բաղադրությունը՝ կովի անարատ պաստերիզացված կաթ 100%, կերակրի աղ, կալցիումի քլորիդ, բնական ներկանյութ աննատո (E160b), բակտերիալ կուլտուրա, շրդանաֆերմենտ, էներգետիկ արժեքը 100գ.-ում՝ 331կկալ/1385կՋ, Սննդային արժեքը 100 գ.-ում՝ ճարպեր 28գ., սպիտակուցներ 22գ., աղ 3.5-4.5գ.: Պահպանման ժամկետը +2⁰C +5⁰C ջերմաստիճանում 6 ամիս, Արտադրող «Ոսկե Սեր» ՍՊԸ, ՀՀ, Շիրակի մարզ, գ. Աշոցք: Հեռ. 091-49-63-33»:

2. Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2022 թվականի դեկտեմբերի 20-ի «Փորձաքննություն իրականացնելու մասին» թիվ 309-Ա հրամանի հիման վրա, ի թիվս այլ ապրանքների, Ապրանքն ուղարկվել է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ նաև՝ **ՊՈԱԿ**) լաբորատոր փորձաքննության՝ Ապրանքում բուսական յուղի առկայությունը և յուղայնության չափը պարզելու նպատակով:

ՊՈԱԿ-ը 2023 թվականի հունվարի 13-ին Հանձնաժողով է ներկայացրել 2023 թվականի հունվարի 13-ի թիվ 2148 փորձարկման արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 2148 փորձարկման արձանագրություն)**, որի համաձայն՝ Ապրանքը պարունակում է բուսական յուղ և Կանոնակարգի իմաստով չի հանդիսանում «պանիր»:

3. Հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 1-ի ««Ոսկե Սեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 48-Ա որոշմամբ հարուցվել է թիվ ՀԳ-00271/23 վարույթը՝ «Ոսկե Սեր» ընկերության կողմից բուսական յուղի առկայությամբ Ապրանքի փաթեթվածքի մակնշվածքում դրա անվանումը «կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերք՝ արտադրված (պատրաստված) պանրի տեխնոլոգիայով» չնշելով և «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվությունը չնշելով Ապրանքը իրացնելու միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության առերևույթ առկայության հիմքով:

Թիվ ՀԳ-00271/23 վարույթի շրջանակներում «Ոսկե Սեր» ընկերությունը հայտնել է, որ թիվ ՀԳ-00271/23 վարույթի հետ վերջինս առնչություն չունի, քանի որ «Պար-Արտ» ընկերությանը «Ոսկե Սեր» ընկերությունից վերջին մատակարարումը կատարվել է 2021 թվականի հունիսի 10-ին:

«Ոսկե Սեր» ընկերությունը հայտնել է նաև, որ «Պար-Արտ» ընկերությունից հսկիչ գնմամբ ձեռքբերված «Լոռի» ապրանքատեսակը չի համարվում «Ոսկե Սեր» ընկերության արտադրանք:

Քանի որ «Ոսկե Սեր» ընկերությունը նախկինում համագործակցել է ԱՁ Ա. Հակոբյանի հետ՝ կապ է հաստատել վերջինիս հետ և պարզել, որ տվյալ ապրանքը նրա կողմից է մատակարարվել «Պար-Արտ» ընկերությանը:

«Ոսկե Սեր» ընկերությունը նշել է, որ իրեն պատկանող պիտակը Ապրանքի վրա հայտնվելու հարցը Հանձնաժողովը կարող է պարզել ԱՁ Ա. Հակոբյանից:

4. Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի փետրվարի 28-ի թիվ 1785 գրությամբ «Պար-Արտ» ընկերությունից պահանջվել է ներկայացնել Հսկիչ գնմամբ ձեռքբերված Ապրանքի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

«Պար-Արտ» ընկերությունը 2023 թվականի մարտի 6-ին ներկայացրել է պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն՝ ԱՁ Ա. Հակոբյանը 2022 թվականի նոյեմբերի 15-ին (հարկային հաշիվ թիվ Ա6034568749), 2022 թվականի դեկտեմբերի 6-ին (հարկային հաշիվ թիվ Ա7010701438) և (հարկային հաշիվ թիվ Ա9379965544), 2022 թվականի դեկտեմբերի 15-ին (հարկային հաշիվ թիվ Ա1569034218) «Պար-Արտ» ընկերությանը մատակարարել է ընդհանուր 321.2 կիլոգրամ «Լոռի էքսկլյուզիվ» անվանումով պանիր:

5. Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի մարտի 13-ի թիվ 1850 գրությամբ ԱՁ Ա. Հակոբյանից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) ԱՁ Ա. Հակոբյանի կողմից ե՞րբվանից է «Պար-Արտ» ընկերությանն իրացվում Ապրանքը, այլ տնտեսավարող սուբյեկտներին Ապրանքն իրացվելու դեպքում՝ նշել դրանց անվանումները և յուրաքանչյուր մատակարարման սկզբնաժամկետները,

2) ու՞մ կողմից է արտադրվում (անվանումը և ՀՎՀՀ-ն) և որտե՞ղ է արտադրվում (արտադրամասի հասցեն) Ապրանքը՝ կցելով հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

3) ԱՁ Ա. Հակոբյանի կողմից Ապրանքի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

4) «Ոսկե Սեր» ընկերության և ԱՁ Ա. Հակոբյանի միջև կնքված բոլոր փաստաթղթերի (պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրեր, դրանց փոփոխություններ, հաշիվ-ապրանքագրեր, հանձնման-ընդունման ակտեր և այլն) պատճենները:

ԱՁ Ա. Հակոբյանը 2023 թվականի մարտի 22-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ Ապրանքն արտադրվում է Ընկերության կողմից (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ազատան, 54/6, ՀՎՀՀ 05801607):

ԱՁ Ա. Հակոբյանը հայտնել է նաև, որ 2017 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև 2018 թվականի հունվարի 26-ն ընկած ժամանակահատվածում «Ոսկե Սեր» ընկերությունում աշխատել է որպես առաքիչ՝ կցելով համապատասխան փաստաթղթերի պատճենները:

ԱՁ Ա. Հակոբյանը որպես Ապրանքի ձեռքբերում ներկայացրել է 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ Ա2740687723 հարկային հաշիվը, որի համաձայն՝ ԱՁ Ա. Հակոբյանը Ընկերությունից ձեռք է բերել 150 կիլոգրամ «Չանախ 50% յուղ.» անվանումով պանրային արտադրանք:

Միաժամանակ, ԱՁ Ա. Հակոբյանը հայտնել է, որ «Ոսկե Սեր» ընկերությունում ավարտելով աշխատանքը՝ սկսել է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ թվում՝ պանրի վերավաճառք: Բացի այդ, ԱՁ Ա. Հակոբյանը նշել է, որ «Ոսկե Սեր» ընկերությունում աշխատանքն ավարտելուց հետո իր մոտ մնացել է «Ոսկե Սեր» ընկերությանը պատկանող «Լոռի Excluzive» անվանումով պիտակներ:

ԱՁ Ա. Հակոբյանը հայտնել է, որ ձեռքբերելով Ընկերությունից «Չանախ 50% յուղ.» անվանումով պանրային արտադրանքը՝ սխալմամբ տվյալ ապրանքի վրա փակցրել է «Լոռի Excluzive» անվանումով պիտակը և մատակարարել «Պար-Արտ» ընկերությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ սխալմամբ փակցված պիտակներով ապրանքները հնարավոր չէ նույնականացնել՝ ԱՁ Ա. Հակոբյանը նշել է, որ չի կարող տալ տեղեկատվություն առ այն, թե տվյալ ապրանքները որ տնտեսավարող սուբյեկտներին է մատակարարվել:

Միաժամանակ, ԱՁ Ա. Հակոբյանը հայտնել է, որ 2022 թվականի օգոստոսի 3-ից համագործակցում է «Կայզեր», 2021 թվականի մարտի 22-ից «Երևան Սիթի», 2022 թվականի հուլիսի 13-ից՝ «Նոր Զովք» և 2021 թվականի ապրիլի 2-ից «Տիտան» սուպերմարկետների հետ:

6. Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 3629 գրությամբ ԱՁ Ա. Հակոբյանից պահանջվել է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) ԱՁ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանը մատակարարված Ապրանքը Ընկերությունից ձեռքբերած «Լոռի», թե «Չանախ» անվանումով ապրանքն է.

2) արդյո՞ք ԱՁ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանը մատակարարված Ապրանքն ամբողջությամբ փաթեթավորվել է ԱՁ Ա. Հակոբյանի կողմից, թե միայն պիտակավորվել է:

ԱՁ Ա. Հակոբյանը 2023 թվականի մայիսի 5-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ «Պար-Արտ» ընկերությանը մատակարարված Ապրանքը Ընկերությունից ձեռքբերած «Չանախ» անվանումով ապրանքն է:

ԱՁ Ա. Հակոբյանը հայտնել է նաև, որ «Պար-Արտ» ընկերությանը մատակարարված Ապրանքը փաթեթավորվել է Ընկերության կողմից, իսկ պիտակավորվել է ԱՁ Ա. Հակոբյանի կողմից:

7. Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 3630 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 3630 գրություն**) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) արդյո՞ք կից ներկայացվող լուսանկարներում պատկերված Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից.

2) եթե այո, ապա ինչ ապրանքատեսակ է այն՝ նշելով ամբողջական անվանումը, և երբվանից է այն արտադրվում:

Ընկերությունը 2023 թվականի ապրիլի 29-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ թիվ 3630 գրությանը կից ներկայացված լուսանկարներում պատկերված է ԱՁ Ա. Հակոբյանի պատվերով, Ընկերության կողմից փաթեթավորված ապրանքը:

Ընկերությունը հայտնել է նաև ապրանքատեսակի անվանումը՝ «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ»: Արտադրվում է Ընկերության կողմից 2021 թվականի ապրիլի 8-ից, իսկ ԱՁ Ա. Հակոբյանի պատվերով փաթեթավորված ապրանքատեսակը՝ 2022 թվականի դեկտեմբերից:

8. ԱՁ Ա. Հակոբյանը 2023 թվականի մայիսի 25-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ Ապրանքը, որն արտադրվել և փաթեթավորվել է Ընկերության կողմից, ձեռք է բերել առանց մակնշման և պիտակի, որից հետո սխալմամբ Ապրանքի վրա փակցրել է ոչ թե ԱՁ Ա. Հակոբյանին պատկանող պիտակը, այլ «Ոսկե Սեր» ընկերությանը պատկանող պիտակը:

ԱՁ Ա. Հակոբյանը նշել է նաև, որ երկու պիտակներն իրարից տարբերվում են միայն արտադրողի մասին տվյալներով:

9. Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 30-ի ««Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 255-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 255-Ա որոշում**) հարուցվել է թիվ ՀԳ-02032/23 վարույթը (այսուհետ նաև՝ **թիվ ՀԳ-02032/23 վարույթ**):

Թիվ ՀԳ-02032/23 վարույթը հարուցվել է Ընկերության վարքագծում ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու դրսևորմամբ Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտի պարտականության խախտման հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

10. Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի հունիսի 9-ի թիվ 5087 գրությամբ «Պար-Արտ» ընկերությունից պահանջվել է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) Ապրանքը ԱՁ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանը մատակարարվել է որպես «Լոռի» անվանումով պանիր, թե՞ «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով ապրանք.

2) արդյո՞ք ԱՁ Ա.Հակոբյանը 2022 թվականի ընթացքում «Պար-Արտ» ընկերությանը մատակարարել է «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով ապրանք՝ մատակարարված լինելու դեպքում կցելով ձեռքբերումը հիմնավորող բոլոր փաստաթղթերի պատճենները:

«Պար-Արտ» ընկերությունը 2023 թվականի հունիսի 14-ին Հանձնաժողով ներկայացրած գրությամբ հայտնել է, որ ԱՁ Ա. Հակոբյանի կողմից 2022 թվականի

ընթացքում «Պար-Արտ» ընկերությանը մատակարարված ապրանքների ցանկում «Լոռի» անվանումը պարունակող ապրանք, առկա է «պանիր Լոռի էքսկլյուզիվ» անվանումով ապրանք (ըստ ձեռքբերման փաստաթղթերի տվյալների): Նշված ապրանքները հավանաբար որպես «Լոռի» պանիր մատակարարվել են «Պար-Արտ» ընկերությանը և ունեցել են այն փաթեթավորումը, որը պատկերված է Գրությանը կից ներկայացված լուսանկարներում:

«Պար-Արտ» ընկերությունը միաժամանակ տեղեկացրել է նաև, որ 2023 թվականի մարտ ամսվա վերջին ԱՁ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանը մատակարարվող ապրանքների կապակցությամբ դուրս գրված հաշիվ ապրանքագրերով որպես ապրանքի անվանում նշվել են տարբեր անվանումներ, ինչպիսիք են օրինակ՝ «Շիրակ Կալինինո», «Ֆետա», «Բարձրակարգ» և այլն, սակայն «Պանիր» բառը հաշիվ ապրանքագրերում չի նշվել:

«Պար-Արտ» ընկերությունը հայտնել է նաև, որ 2022 թվականի ընթացքում ԱՁ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանը «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով ապրանք մատակարարված լինելու կապակցությամբ ձեռքբերման փաստաթղթեր առկա չեն:

11. Թիվ 315-Ա որոշման հիման վրա 2023 թվականի հուլիսի 14-ին ժամը 15:00-ին, Հանձնաժողովի գտնվելու վայրում, Ընկերության ներկայացուցիչ՝ գլխավոր հաշվապահ Ֆ. Հայրապետյանի և ԱՁ Ա. Հակոբյանի ներկայությամբ իրականացվել է զննում, որի արդյունքում կազմվել է «Զննման արդյունքների վերաբերյալ» թիվ 315 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 315 արձանագրություն**):

Թիվ 315 արձանագրության համաձայն՝ Ապրանքի դրոշմապիտակի «Թաքս Սթամփ» ծրագրի միջոցով սկանավորմամբ իրականացված զննման արդյունքում պարզվել է, որ Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից Շիրակ, Ազատան 54/6 հասցեում, Ապրանքի անվանումն է «Պանիր Լոռի», յուղի զանգվածային մասը՝ 50%, պիտանիության ժամկետը՝ 6 ամիս:

12. Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2023 թվականի հուլիսի 21-ի թիվ 6616 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊՈԱԿ-ին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1) արդյո՞ք ՊՈԱԿ-ը ապրանքի նմուշի առկայության դեպքում կարող է որոշել այն հանդիսանում է «Լոռի», թե «Չանախ» տեսակի կաթնամթերք.

2) եթե այո, ապա որքա՞ն նմուշ է անհրաժեշտ դա որոշելու համար:

ՊՈԱԿ-ը 2023 թվականի հուլիսի 27-ին Հանձնաժողով ներկայացրած գրությամբ հայտնել է, որ ՊՈԱԿ-ի սննդամթերքի անվտանգության հետազոտությունների փորձարկման լաբորատորիան կարող է իրականացնել արտադրանքի նույնականացում՝ հիմք ընդունելով պանիր «Լոռի» և պանիր «Չանախ» ապրանքատեսակների համար հաստատված ազգային ստանդարտների (ՀՍՏ 378-2016 և ՀՍՏ 377-2016) նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշները և համապատասխանեցնելով ստանդարտով սահմանված պահանջներին որոշել տվյալ արտադրատեսակի համապատասխանությունը ապրանքատեսակի բնութագրին և անվանմանը:

ՊՈԱԿ-ը հայտնել է նաև, որ արտադրանքի նույնականացում իրականացնելու նպատակով ՊՈԱԿ-ին անհրաժեշտ է ներկայացնել յուրաքանչյուր հետազոտվող ապրանքատեսակից մեկական պանրագլուխ:

13. Թիվ 365-Ա որոշմամբ նշանակվել է փորձաքննություն՝ Ապրանքի տեսակը («Լոռի», «Չանախ» և այլն) և դրանում բուսական յուղի առկայության հարցը պարզելու նպատակով:

Ապրանքը փորձաքննություն ուղարկելուց առաջ՝ 2023 թվականի օգոստոսի 22-ին ժամը 12:45-ին և ՊՈԱԿ-ին հանձնելիս՝ 2023 թվականի օգոստոսի 22-ին ժամը 14:30-ին տեսանկարահանվել է, որից հետո Ընկերության ներկայացուցիչ Արամ Կռոյանի և ԱՁ Ա. Հակոբյանի ներկայությամբ Ապրանքը հանձնվել է ՊՈԱԿ-ին՝ կազմելով հանձնման-ընդունման ակտ:

ՊՈԱԿ-ը 2023 թվականի օգոստոսի 29-ին Հանձնաժողով է ներկայացրել 2023 թվականի օգոստոսի 28-ի թիվ 1411 փորձարկման արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 1411 փորձարկման արձանագրություն**):

Թիվ 1411 փորձարկման արձանագրության համաձայն՝ Ապրանքը ենթարկվել է ֆիզիկաքիմիական (յուղի զանգվածային մաս, խոնավության զանգվածային մաս, կերակրի աղի զանգվածային մաս), զգայորոշման և ճարպաթթվային կազմի նույնականացում (բուսական յուղի առկայության որոշում) ցուցանիշներով հետազոտման:

Ապրանքի ճարպաթթվային կազմի նույնականացմամբ (բուսական յուղի առկայության որոշում) պարզվել է, որ Ապրանքը պարունակում է բուսական յուղ:

Համաձայն Կանոնակարգի՝ «Պանիր» ապրանքատեսակը հանդիսանում է կաթնային կամ կաթնային բաղադրյալ մթերք, որի բաղադրության մեջ բուսական յուղերի առկայություն չի թույլատրվում:

Հիմք ընդունելով փորձարկման արդյունքները, Կանոնակարգի 5-րդ կետով հաստատված սահմանումները և 82-րդ կետը՝ ՊՈԱԿ-ը փաստել է, որ լաբորատոր փորձարկումների համար ներկայացված Ապրանքը հանդիսանում է կաթ պարունակող մթերք կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով:

Լաբորատոր հետազոտության շրջանակներում Ապրանքի ձևի, չափի և զանգվածի ստուգման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

| **Ապրանքի չափսերը, սմ** | **Ապրանքի ձևը՝ քառակուսի հիմքերով չորսվակ** |
|---|---|
| Երկարությունը | 29.0 |
| Լայնությունը | 13.5 |
| Բարձրությունը | 10.0 |
| Զանգվածը, կգ | 4.380 |

ՊՈԱԿ-ը ներկայացրել է նաև «Չանախ» և «Լոռի» պանիրների զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշները՝ համաձայն հայկական ազգային ստանդարտների պահանջների (ՀՍՏ 377-2016 և ՀՍՏ 378-2016):

14. Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2023 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 7915 գրությամբ «Պար-Արտ» ընկերությունից պահանջվել է հստակեցնել Հանձնաժողովի

նախագահի թիվ 5087 գրության 1-ին կետով պահանջված տեղեկատվությանն ի պատասխան ներկայացված տեղեկատվությունն այն մասին, թե ԱՁ Ա. Հակոբյանի կողմից Ապրանքը որպես ինչ ապրանք է մատակարարվել «Պար-Արտ» ընկերությանը և իրացվել:

«Պար-Արտ» ընկերությունը 2023 թվականի սեպտեմբերի 12-ին Հանձնաժողով ներկայացված գրությամբ հայտնել է, որ ԱՁ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանն Ապրանքը մատակարարվել է որպես «Լոռի» տեսակի պանիր, ուստի դրանք իրացվել են համապատասխանաբար որպես «Լոռի» տեսակի պանիր:

15. Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2023 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 8096 գրությամբ Հանձնաժողովը դիմել է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ նաև՝ **Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին**)՝ խնդրելով տրամադրել պանիր «Լոռի» և պանիր «Չանախ» ապրանքատեսակների համար հաստատված ազգային ստանդարտների նորմատիվ փաստաթղթերը՝ ՀՍՏ 378-2016 և ՀՍՏ 377-2016:

Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմինը 2023 թվականի հոկտեմբերի 5-ին էլեկտրոնային տարբերակով՝ https://www.armstandard.am/ կայքի միջոցով, փաստաթղթի ճշգրտությունը հավաստող QR կոդի առկայությամբ Հանձնաժողովին է տրամադրել պահանջված փաստաթղթերը:

16. Վարչության 2023 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 9962 զեկուցագրով Ընկերության վերաբերյալ հարուցված թիվ ՀԳ-02032/23 վարույթի և ԱՁ Ա. Հակոբյանի վերաբերյալ թիվ ՀԳ-02033/23 վարույթի վերաբերելի նյութերի պատճենները, ինչպես նաև Հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 469-Ա և թիվ 470-Ա որոշումների պատճենները կցվել են Վարույթի նյութերին:

17. Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2023 թվականի հունիսի 8-ի թիվ ԳԳ-474 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ-474 գրություն**) Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ՝ խնդրելով տրամադրել Ընկերության կողմից 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՊԵԿ-ը, ի պատասխան թիվ ԳԳ-474 գրության, 2023 թվականի հունիսի 15-ին Հանձնաժողովին է տրամադրել հայցվող տեղեկատվությունը, որի համաձայն.

18. ՊԵԿ-ի տեղեկատվական տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերության 2021 թվականի ընդհանուր հասույթի չափը կազմում է

ՀՀ դրամ:

***<u>5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.</u>***

1. Ապրանքի պիտակի վրա առկա է հետևյալ մակնշումը. ««Շիրակ», «Լոռի Excluzive», «09 NOV 2022», «պատրաստված է անարատ կաթից», «յուղայնությունը 50%», Բաղադրությունը՝ կովի անարատ պաստերիզացված կաթ 100%, կերակրի աղ, կալցիումի քլորիդ, բնական ներկանյութ աննատո (E160b), բակտերիալ կուլտուրա, շրդանաֆերմենտ, էներգետիկ արժեքը 100գ.-ում՝ 331կկալ/1385կՋ, Սննդային արժեքը 100 գ.-ում՝ ճարպեր 28գ., սպիտակուցներ 22գ., աղ 3.5-4.5գ.: Պահպանման ժամկետը +2ºC +5ºC ջերմաստիճանում 6 ամիս, Արտադրող «Ոսկե Սեր» ՍՊԸ, ՀՀ, Շիրակի մարզ, գ. Աշոցք: Հեռ. 091-49-63-33»:

2. Ապրանքը պարունակում է բուսական յուղ և Կանոնակարգի իմաստով չի հանդիսանում «պանիր»:

3. Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից:

4. Ապրանքի պիտակը փակցվել է ԱՁ Ա. Հակոբյանի կողմից:

5. Ապրանքի մակնշվածքում բացակայում է դրա անվանումը, «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվությունը և արտադրողի մասին տվյալները:

6. Ապրանքն Ընկերության կողմից ԱՁ Ա. Հակոբյանին որպես «Լոռի» տեսակի պանիր իրացված ապրանքն է:

7. Ապրանքը ԱՁ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանն իրացվել է որպես «Լոռի» տեսակի պանիր:

8. Ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ապրանքը հանդիսանում է «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով ապրանք:

9. ԱՁ Ա. Հակոբյանի կողմից տրված գրավոր բացատրության համաձայն՝ Ապրանքը Ընկերությունից ձեռք է բերել առանց մակնշման և պիտակի:

10. Ըստ ԱՁ Ա. Հակոբյանի գրավոր բացատրության՝ ԱՁ Ա. Հակոբյանի կողմից «**Լոռի Excluzive**» անվանումով Ապրանքի վրա փակցված պիտակները տարբերվում են միայն արտադրողի տվյալներով:

11. Ապրանքի դրոշմապիտակի համաձայն՝ Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից որպես «Լոռի» պանիր:

12. Թիվ 1411 փորձարկման արձանագրության համաձայն՝ Ապրանքում առկա է բուսական յուղ և հանդիսանում է «Կաթ պարունակող մթերք կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով» ապրանք:

Լաբորատոր հետազոտության շրջանակներում Ապրանքի ձևի, չափի և զանգվածի ստուգման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

| **Ապրանքի չափսերը, սմ** | **Ապրանքի ձևը՝ քառակուսի հիմքերով չորսվակ** |
|---|---|
| Երկարությունը | 29.0 |
| Լայնությունը | 13.5 |
| Բարձրությունը | 10.0 |

| Զանգվածը, կգ | 4.380 |
|---|---|

13. ՊՈԱԿ-ը ներկայացրել է «Չանախ» և «Լոռի» պանիրների զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշները՝ համաձայն հայկական ազգային ստանդարտների պահանջների (ՀՍՏ 377-2016 և ՀՍՏ 378-2016):

14. Թիվ 1411 փորձարկման արձանագրության հիման վրա Պանիր «Լոռի» ապրանքատեսակի համար հաստատված ազգային ստանդարտի՝ ՀՍՏ 378-2016 նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշների համեմատության արդյունքում Ապրանքի լայնության և կերակրի աղի զանգվածային մասի վերաբերյալ ցուցանիշներն ավելի, իսկ երկարության, բարձրության, յուղի զանգվածային մասի, խոնավության զանգվածային մասի վերաբերյալ ցուցանիշներն համապատասխանում են պանիր «Լոռի» ապրանքատեսակի համար հաստատված ազգային ստանդարտի (ՀՍՏ 378-2016) նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշներին (տե՛ս ստորև ներկայացված Աղյուսակում):

**Աղյուսակ**

| | **Լոռի** | **Չանախ** | **Փորձաքննության արդյունքներ** | **Համապատասխանություն** |
|---|---|---|---|---|
| Երկարությունը | 28.0-30.0 | 18.0-20.0 | 29.0 | Համապատասխանում է Լոռիին |
| Լայնությունը | 14.0-15.0 | 18.0-20.0 | 13.5 | Առավել համապատասխանում է Լոռիին |
| Բարձրությունը | 10.0-12.0 | 18.0-20.0 կամ 11.0-15.0 | 10.0 | Համապատասխանում է Լոռիին |
| Յուղի զանգվածային մասը՝ վերահաշված ըստ չոր նյութի, % ոչ պակաս (ըստ յուղայնության) | 45.0 % յուղայնության դեպքում՝ 45.0 **± 1.6, 50.0** % յուղայնության դեպքում՝ 50.0 **± 1.6** | 40.0 % յուղայնության դեպքում՝ 40.0 ± **1.6, 47.0** % յուղայնության դեպքում՝ 47.0 ± **1.6** | 48.8 | Համապատասխանում է Լոռիին |
| Խոնավության զանգվածային մասը, % ոչ ավելի (ըստ յուղայնության) | 44.0 | 40.0 % յուղայնության դեպքում՝ 52,0, **47.0** % յուղայնության դեպքում՝ 49,0 | 44.4 | Համապատասխանում է Լոռիին |
| Կերակրի աղի զանգվածային մասը, % | 3.5-4.5 | 4.0-7.0 | 3.8 | Առավել համապատասխանում է Լոռիին |

15. Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 30-ի թիվ 238-Ա որոշմամբ անհատ ձեռնարկատեր Ավետիք Հակոբյանի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության

միջոց՝ «Շիրակ» ապրանքային նշանով, «Լոռի Excluzive» անվանումով, 50% յուղայնությամբ, 2022 թվականի նոյեմբերի 9-ին արտադրված ապրանքի պիտակի վրա «Ոսկե Սեր» ֆիրմային անվանմանը նույնական ֆիրմային անվանում օգտագործմամբ շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության համար:

16. Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 30-ի թիվ 239-Ա որոշմամբ անհատ ձեռնարկատեր Ավետիք Հակոբյանի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ «Շիրակ» ապրանքային նշանով, «Լոռի Excluzive» անվանումով, 50% յուղայնությամբ, 2022 թվականի նոյեմբերի 9-ին արտադրված ապրանքը «Լոռի Excluzive» մակնշումով, փաթեթվածքի մակնշվածքում «կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերք՝ արտադրված (պատրաստված) պանրի տեխնոլոգիայով» անվանման և «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվության բացակայությամբ իրացնելու դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության համար:

17. Հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 13-ի թիվ 266-Ա որոշմամբ «Ոսկե Սեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-00271/23 վարույթը կարճելու մասին թի 266-Ա որոշմամբ կարճվել է «Ոսկե Սեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-00271/23 վարույթը:

18. Հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 469-Ա որոշմամբ ԱՁ. Ա. Հակոբյանի կողմից Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 3629 գրության պահանջի հիման վրա Ապրանքի «Չանախ» տեսակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն այն դեպքում, երբ տվյալ ապրանքը չի հանդիսանում «Չանախ» անվանումով ապրանք, որակվել է որպես Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտի պարտականության խախտում:

19. Հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 470-Ա որոշմամբ Ընկերության կողմից Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 3630 գրության պահանջի հիման վրա Ապրանքի վերաբերյալ «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» տեղեկատվության տրամադրումն այն դեպքում, երբ տվյալ ապրանքն արտադրված չէ «Չանախ» տեսակի պանրի տեխնոլոգիայով, որակվել է որպես Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտի պարտականության խախտում:

20.

21. Ընկերության 2021 թվականի ընդհանուր հասույթի չափը կազմում է

ՀՀ դրամ:

***6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.***

***1) Ընկերության կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.***

Վարույթը հարուցվել է Ընկերության կողմից հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հետևյալ հիմքերով.

1. ԱՁ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանն իրացված, Ընկերության կողմից արտադրված Ապրանքը ոչ թե «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով ապրանք է, այլ՝ «Լոռի» անվանումով պանիր (նշվածի մասին են վկայում «Պար-Արտ» ընկերության կողմից ներկայացված Ապրանքի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները), որը սակայն պարունակում է բուսական յուղ և չի համապատասխանում Կանոնակարգի պահանջներին.

2. անկախ այն հանգամանքից, Ապրանքը հանդիսանում է «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» արտադրանք, թե «Լոռի» անվանումով պանիր՝ դրա մակնշվածքում բացակայում են Ապրանքի անվանումը և «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվության նշումը: Ավելին, փաթեթվածքի վրա բացակայում է արտադրողի մասին տվյալները:

Ընկերությունն առարկել է՝ հայտնելով հետևյալը.

1) Ընկերության կողմից արտադրվում են տարբեր տեսակի պանիրներ և կաթ պարունակող կաթնային յուղի փոխարինիչով մթերքներ, վերջինների թվում նաև ԿՊՄ Գյումրի, Շիրակ, Չանախ, Կումայրի, Ազատան: ԱՁ Ա. Հակոբյանը, այցելելով գործարան, ծանոթանալով Ընկերության կողմից արտադրվող ապրանքատեսականու հետ, պատվիրել է կաթ պարունակող մթերք պատրաստված Չանախ պանրի տեխնոլոգիայով ապրանքը, որը պետք է փաթեթավորվեր իր իսկ կողմից տրամադրված փաթեթների մեջ: Ընկերությունը փաթեթավորման պատվերը կատարելուց հետո, մատակարարել է ապրանքը հաշիվ ապրանքագրերով՝ պատվիրատուին նախապես տրամադրելով Ապրանքի վրա փակցվող պիտակի մակնշման օրինակը, որը ԱՁ Ա. Հակոբյանը պետք է օգտագործեր իր ընկերության պիտակի վրա ու համապատասխանեցներ Կանոնակարգի պահանջներին, իսկ ԱՁ Ա. Հակոբյանը հավաստիացրել է, որ իր կողմից փակցվող պիտակը համապատասխանեցվել է Կանոնակարգի պահանջներին.

2) ԱՁ Ա. Հակոբյանը Ընկերությունից գնել է նաև «Լոռի» պանիր, որը մատակարարելուց առաջ արտադրվել, փաթեթավորվել և պիտակավորվել է Ընկերության կողմից.

3) ԱՁ Ա. Հակոբյանի կողմից ապրանքները գնելուց հետո Ընկերությունը պարտավորություն չի կրում հետևելու մատակարարված ապրանքի վերավաճառքը, դա գործնականում հնարավոր էլ չէ իրականացնել, քանի որ Ընկերությունը բացի նշված գործընկերոջից ունի նաև այլ բազմաթիվ գործընկերներ.

4) Ընկերությունը արտադրում է ինչպես պանիր, այնպես էլ կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք, և այն հանգամանքը, որ Ապրանքն արտադրվել է

Ընկերության կողմից ընդունելի չէ, քանի որ Ապրանքի վրա առկա պիտակավորումը և Ապրանքի փաթեթը որևէ կապ չունի Ընկերության հետ, ավելին չի բացառվում, որ այդ նույն փաթեթով շուկայում այլ արտադրանքներ ևս առկա լինեն:

5) Այն հանգամանքը, որ Ապրանքը հանդիսանում է «կաթ պարունակող կաթնային փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ», Ընկերությունը նկատի է ունեցել բացառապես իր կողմից արտադրված ապրանքը:

6) Ընկերությունն ԱՁ Ա Հակոբյանին տրամադրել է մակնշման թղթային օրինակներ ընդամենն այն նպատակով, որ վերջինս կարողանա օգտվել դրանց բովանդակությունից:

7) Ապրանքի փաթեթվածքի և/կամ մակնշման, դրա բովանդակության հետ Ընկերությունը որևէ կապ չունի, դրանք չեն կատարվել Ընկերության կողմից, հետևապես դրանցում առկա սխալ կամ թերի բովանդակության համար Ընկերությունը չպետք է կրի որևէ հետևանք:

8) Ընկերությունն իր կողմից մատակարարված ցանկացած ապրանք հաշվարկային փաստաթղթերում նշում է այնպես, ինչին որ համապատասխանում է տվյալ ապրանքը:

9) Ընկերության ներկայացուցիչները մասնակցել են փորձարկման վերաբերելի որոշ գործընթացի, սակայն այն հարցը, որ փորձարկման է հանձնվել Ընկերության կողմից արտադրված ապրանք, տվյալ գործողությունների ընթացքում չէր կարող հաստատվել:

10) Փորձարկման հանձնված ապրանքի պահպանման պայմանները, դրանց ժամկետների պահպանվածությունը և այլ հանգամանքներ կասկածի տակ են դնում դրա արդյունքների արժանահավատությունն ընդհանրապես և չափսերի իսկության տեսանկյունից մասնավորապես:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը, նախևառաջ, հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումների պարզաբանմանը.

***1. Ինչպե՞ս է դրսևորվում հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցության օբյեկտիվ կողմը.***

***2. Արդյո՞ք տնտեսավարող սուբյեկտի կողմից բուսական յուղի առկայությամբ ապրանքը որպես պանիր իրացնելը պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ.***

***3. Արդյո՞ք հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցությունը կարող է դրսևորվել մի տնտեսավարող սուբյեկտի կողմից մեկ այլ տնտեսավարող սուբյեկտին ապրանքներ իրացնելու միջոցով.***

***4. Ո՞վ է կրում տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթում անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը.***

***5. Արդյո՞ք տնտեսավարող սուբյեկտը կարող է ապրանքի արտադրանքն առանց դրոշմապիտակով դրոշմավորման փոխանցել այլ անձի, ինչպես նաև դրոշմապիտակներն առանց ապրանքի վրա փակցնելու փոխանցել կամ օտարել այլ անձի.***

***<u>Առաջին հարցադրման կապակցությամբ.</u>***

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է

սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է վարքագիծը անբարեխիղճ մրցակցություն որակելու երկու եղանակ. մի դեպքում անբարեխիղճ մրցակցության դեպքերն են Օրենքի 16-24-րդ հոդվածներով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները պարունակող գործողությունը կամ վարքագիծը, եթե այն.

- հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

- խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս և սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Այսինքն, օրենսդրի կողմից սահմանված անբարեխիղճ մրցակցության առանձին դրսևորումների սահմանումը, ըստ էության, Օրենքի 16-րդ հոդվածի մասնավոր դեպքերի առարկայացումն է և, հետևաբար, Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշների քննարկման անհրաժեշտությունը բացակայում է անբարեխիղճ մրցակցության մասնավոր դեպքերից յուրաքանչյուրի, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության դեպքում:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով

նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վերոնշյալ կարգավորումների հիման վրա Հանձնաժողովը հարկ է համարում, նախևառաջ, արձանագրել, որ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցությունն իր բնույթով ունի ձևական կազմ, այսինքն՝ հետևանքի վրա հասնելը՝ սպառողի մոլորվելու փաստը, վարքագիծը Օրենքի 21-րդ հոդվածով որակելու պարտադիր և անհրաժեշտ պայման չէ: Ըստ այդմ, վարքագիծը հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտում որակելու համար բավարար է միայն մոլորվելու հնարավորությունն ու հավանականությունը, այլ ոչ թե ինքնին մոլորվելու փաստը:

Մյուս կողմից, հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտման ձևական բնույթը դրսևորվում է նրանում, որ արարքը կատարման փաստով համարվում է ավարտված: Այլ կերպ ասած՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ վայրում, այդ թվում՝ ինտերնետային կայքի տարբեր բաժիններում, այլ միջոցով կամ հետագայում անհրաժեշտ տեղեկությունները հայտնելը կամ այլ կերպ հասանելի դարձնելը իրավախախտումը չի վերացնում:

Միևնույն ժամանակ, կարևոր է արձանագրել, որ օրենսդիրն այս իրավախախտման օբյեկտիվ կողմի սպառիչ ցանկ չի սահմանել, այլ մասնավորեցրել է դրանցից մի քանիսը, որոնք արտահայտվում են.

1) ապրանքի բնութագրերի կամ իրացման պայմանների վերաբերյալ թյուր տպավորության՝ ապակողմնորոշելու հնարավորության ստեղծմամբ, այդ թվում՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելու եղանակով.

2) սպառողին գովազդվող կամ իրացվող ապրանքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալով, այդ թվում՝ թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալներ նշելու եղանակով.

3) տնտեսական մրցակցությունը կանխող, սահմանափակող կամ արգելող կամ սպառողների շահերը վնասող օրենքին հակասող գովազդով.

4) ցանկացած այլ դրսևորմամբ, որը ստեղծում է տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց բնութագրերի կամ այլ պայմանների վերաբերյալ մոլորեցնելու հնարավորություն:

Ընդ որում, միևնույն վարքագիծը միաժամանակ կարող է համապատասխանել հասարակության մոլորեցման մեկից ավելի դրսևորումներին: Այսպես, օրինակ՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կարող է ոչ միայն ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալ, այլ նաև ստեղծել թյուր տպավորության՝ ապակողմնորոշելու հնարավորություն:

Վերոգրյալի համատեքստում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն առկա չէ, եթե կարող է վնաս հասցվել սպառողների կյանքին, առողջությանը, անվտանգությանը, հասարակական կամ պետական անվտանգությանը կամ շրջակա միջավայրին: Այլ կերպ ասած՝ եթե տնտեսավարող սուբյեկտի վարքագիծը վնասում է կամ կարող է վնասել բացառապես հիշատակված հանրային շահերը, ապա այն դուրս է Հանձնաժողովի իրավասության տիրույթից:

***<u>Երկրորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

Կանոնակարգի 5-րդ կետի 110-րդ պարբերության համաձայն՝ «պանիր» է համարվում կաթնային մթերքը կամ կաթնային բաղադրյալ մթերքը, որն արտադրվել է կաթից, կաթնային մթերքներից և (կամ) կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերքներից՝ օգտագործելով կամ չօգտագործելով հատուկ մերաններ, այն տեխնոլոգիայով, որն ապահովում է կաթնային սպիտակուցի կոագուլյացիան կաթ մակարդող ֆերմենտների օգնությամբ, կամ թթվային կամ ջերմաթթվային եղանակով՝ հետագայում շիճուկից պանրային զանգվածի առանձնացմամբ, դրա կաղապարմամբ, մամլմամբ, աղադրմամբ կամ առանց աղադրման, հասունացմամբ կամ առանց հասունացման՝ ավելացնելով կամ չավելացնելով ոչ կաթնային բաղադրիչներ, որոնց ներմուծման նպատակը կաթի բաղկացուցիչ մասերը փոխարինելը չէ:

Կանոնակարգի 5-րդ կետի 111-րդ պարբերության համաձայն՝ «պանրի տեխնոլոգիայով արտադրված՝ կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերք» է համարվում պանրի արտադրության տեխնոլոգիային համապատասխան արտադրված՝ կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքը:

Կանոնակարգի 81-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքի անվանումը պետք է սկսվի «կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերք» բառերով (բացառությամբ՝ սերուցքաբուսական սփրեդի, սերուցքաբուսական հալած խառնուրդի, կաթնային ճարպի փոխարինիչով պաղպաղակի): Կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքի արտադրության տեխնոլոգիայի մասին տեղեկատվությունը նշվում է «արտադրված (պատրաստված) տեխնոլոգիայով» բառերի ձևով՝ նշելով համապատասխան կաթնային մթերքի համար II բաժնով սահմանված հասկացությունը:

Կանոնակարգի 81-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքի անվանման տառատեսակի չափը պետք է կազմի առնվազն 2.5 մմ: Կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքի անվանման մեջ «մթերք» բառը կարող է փոխարինվել մթերքի կազմությունը (կոնսիստենցիան) կամ կառուցվածքը (կրեմ, մածուկ, սոուս և այլն) բնութագրող ընդհանուր տեխնիկական եզրույթով: Օրինակ՝ «թթվասերի տեխնոլոգիայով արտադրված կաթ պարունակող մթերք՝ կաթնային ճարպի փոխարինիչով», «կաթնաշոռի տեխնոլոգիայով արտադրված կաթ պարունակող կրեմ՝ կաթնային ճարպի փոխարինիչով»:

Կանոնակարգի 81-րդ կետի 4-րդ պարբերության համաձայն՝ սպառողական փաթեթվածքի վրա նշվում է կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքում բուսական յուղերի առկայության մասին տեղեկատվությունը: Նշված տեղեկատվությունը զետեղվում է փաթեթվածքի կամ պիտակի վրա հատուկ հատկացված տեղեկատվական

դաշտում՝ այդ տեղեկատվական դաշտի գույնին հակադիր գույն ունեցող տառատեսակով: Տեղեկատվական դաշտը լրացվում է հետևյալ տեղեկատվությամբ. «Պարունակում է բուսական յուղեր»: Տեղեկատվական դաշտը պետք է ունենա պիտակի կամ փաթեթվածքի գույնին հակադիր գույն, որտեղ զետեղվում է մթերքի մակնշվածքը, այդ թվում՝ դրա անվանումը:

Կանոնակարգի 81-րդ կետի 5-րդ պարբերության համաձայն՝ կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքի սպառողական փաթեթվածքի տեղեկատվական դաշտի տառատեսակի չափը պետք է լինի առնվազն 3 մմ այն դեպքում, երբ փաթեթվածքի չափը թույլ է տալիս լրացնել տեղեկատվական դաշտը նշված չափերի տառատեսակով տեղեկատվությամբ: Այն դեպքում, երբ փաթեթվածքի չափերը թույլ չեն տալիս լրացնել տեղեկատվական դաշտը նշված չափերի տառատեսակով տեղեկատվությամբ, ապա նշված տեղեկատվությունը զետեղվում է առավելագույնս խոշոր չափի տառատեսակով:

Կանոնակարգի 82-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ կաթ պարունակող մթերքների և կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքների համար չի թույլատրվում օգտագործել կաթի և կաթնային մթերքների, դրանց տարբեր համադրությունների համար, այդ թվում՝ դրանց անվանումներում, ապրանքային նշաններում (առևտրային նշաններում) (առկայության դեպքում) կամ նման մթերքների մակնշման ժամանակ ստեղծված անվանման մեջ, պիտակների վրա, ցանկացած նպատակներով սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված հասկացությունները, որոնք կարող են սպառողին շփոթության մեջ գցել, ինչպես նաև բառեր, որոնք ձևավորվել են կաթնային մթերքների հասկացություններից (օրինակ՝ «պանրանման», «պանրային», «պանրագործական», «շրդանային», «թթվասերիկ», «կաթնաշոռիկ», «սերուցքիկ», «կարագիկ», «կաթնաշոռիկ» և այլն):

Կանոնակարգի 82-րդ կետի 3-րդ պարբերության համաձայն՝ կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքի անվանումը, այդ թվում՝ մթերքի ստեղծված անվանումը և տեղեկատվական դաշտը զետեղվում են սպառողական փաթեթվածքի վրա՝ անմիջական հեռավորության վրա փաթեթվածքի մակերևույթի այն մասում, որն ուղղված է դեպի սպառողը՝ սպառողական դարակի վրա կամ փաթեթվածքի մակերևույթի այն մասում, որը հեշտ հասանելի է սպառողի համար՝ ձեռք բերվող մթերքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու առումով:

Վկայակոչված դրույթների համադրումից հետևում է.

1. կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքի անվանումը պետք է զետեղված լինի դրա սպառողական փաթեթվածքի վրա.

2. կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքի անվանումը պետք է սկսվի «կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերք» բառերով.

3. կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքի սպառողական փաթեթվածքի վրա նշվում է դրանում բուսական յուղերի առկայության մասին տեղեկատվությունը: Տեղեկատվական դաշտը լրացվում է հետևյալ տեղեկատվությամբ. «Պարունակում է բուսական յուղեր»:

4. «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվությունը զետեղվում է փաթեթվածքի կամ պիտակի վրա հատուկ հատկացված տեղեկատվական դաշտում՝ այդ տեղեկատվական դաշտի գույնին հակադիր գույն ունեցող տառատեսակով, իսկ

տեղեկատվական դաշտը պետք է ունենա պիտակի կամ փաթեթվածքի գույնին հակադիր գույն, որտեղ զետեղվում է մթերքի մակնշվածքը, այդ թվում՝ դրա անվանումը.

5. կաթնային բաղադրյալ մթերք պանրի մեջ թույլատրվում է ավելացնել ոչ կաթնային բաղադրիչներ, սակայն դրանց ավելացումը պետք է նպատակ չունենա փոխարինել կաթի բաղկացուցիչ մասերը, իսկ անվանումը պետք է լինի ոչ թե «պանիր», այլ օրինակ՝ «պանիր՝ խոզապուխտով», «պանիր՝ սնկով», «պանիր՝ սոխով» և այլն.

6. Կանոնակարգի իմաստով կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք չհամարվող ապրանքները մակնշելիս չի թույլատրվում օգտագործել նույնիսկ «պանրանման», «պանրային», «պանրագործական», «շրդանային», «թթվասերիկ», «կաթնաշոռիկ», «սերուցքիկ», «կարագիկ», «կաթնաշոռիկ» և նմանատիպ այլ հասկացություններ:

Միաժամանակ, բուսական յուղը ոչ կաթնային ճարպ է և հանդիսանում է կաթնայուղի փոխարինիչ, մինչդեռ կաթնայուղը կաթի բաղադրյալ և կարևորագույն մասն է և ապահովում է կաթի ու դրանից ստացվող այլ մթերքների՝ պանրի, կարագի, մածունի, թթվասերի յուղայնությունը: Այսինքն՝ այն դեպքում, երբ մթերքի մեջ ավելացվում է ոչ կաթնային ճարպ՝ բուսական յուղ, դա բարձրացնում են մթերքի յուղայնությունը՝ այդպիսով հնարավորություն տալով օգտագործել ավելի քիչ քանակությամբ կամ ավելի քիչ յուղայնությամբ կաթ: Հետևաբար բուսական յուղի ավելացումը կաթից ստացվող մթերքում հետապնդում է մեկ նպատակ՝ փոխարինել կաթի յուղը, այսինքն՝ օգտագործել ավելի քիչ քանակությամբ կաթի յուղ:

Արդյունքում, Կանոնակարգը թույլ է տալիս պանրի մեջ ավելացնել հենց այդպիսի ոչ կաթնային բաղադրիչներ՝ խոզապուխտ, սունկ, սոխ և այլն, սակայն դրանք չեն կարող փոխարինել կաթի բաղկացուցիչ որևէ մասի:

**Հետևաբար «պանիր» անվանումը առանց բաղադրյալ մթերքների նշման կարող է կրել միայն կաթնային մթերք պանիրը, որում արգելվում է օգտագործել ոչ կաթնային ճարպեր:**

Նման պայմաններում տնտեսավարող սուբյեկտի կողմից բուսական յուղի առկայությամբ ապրանքը որպես պանիր իրացնելը պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

***<u>Երրորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտ է համարվում ՝ անհատ ձեռնարկատերը, իրավաբանական անձը, այլ կազմակերպությունը, դրա ներկայացուցչությունը կամ մասնաճյուղը, անձանց խումբը կամ անձանց միությունը, իսկ սույն օրենքով նախատեսված՝ համակենտրոնացման, անբարեխիղճ մրցակցության և տնտեսական գործունեության համակարգման դեպքերում տնտեսավարող սուբյեկտ է համարվում նաև ֆիզիկական անձը.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ սպառող է համարվում սպառման նպատակով ապրանք ձեռք բերողը կամ հնարավոր ձեռք բերող իրավաբանական կամ ֆիզիկական անձը կամ պետական մարմինը:

Վերոգրյալից բխում է, որ Օրենքի իմաստով սպառող է հանդիսանում նաև տնտեսավարող սուբյեկտը՝ իրավաբանական անձը:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 521-րդ հոդվածի համաձայն՝ մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար:

Նշված նորմի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ մատակարարման պայմանագրի էությունից բխում է, որ տնտեսավարող սուբյեկտը իր կողմից արտադրված ապրանքը հանձնում է մեկ այլ տնտեսավարող սուբյեկտի՝ այն այլ անձանց իրացնելու կամ այլ կերպ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար և նման պարագայում այդ ապրանքը չի կարող գնորդ տնտեսավարող սուբյեկտի կողմից օգտագործվել իր անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ կապված նպատակներով: Ստացվում է, որ մատակարարման պայմանագրի շրջանակում ձեռքբերված ապրանքը հետագայում մեկ այլ սուբյեկտի կողմից դրվում է շրջանառության մեջ:

Վերոգրյալն ամբողջացնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Օրենքով նախատեսված պահանջները պետք է պահպանվեն ցանկացած դեպքում, անկախ այն հանգամանքից ապրանքն ուղղակիորեն է վաճառվում սպառողին, թե միջնորդավորված կերպով՝ վերավաճառվում է:

Այսպիսով, Օրենքի 21-րդ հոդվածի կարգավորման տեսանկյունից էական չի կարող համարվել այն հանգամանքը, թե տնտեսավարող սուբյեկտի մոլորեցնող գործողությունները ֆիզիկական, թե իրավաբանական անձանց նկատմամբ են կիրառվում, քանի որ իրավաբանական անձի կողմից ապրանքի ձեռքբերումը նույնպես Օրենքի իմաստով ունի ուղղակի կամ միջնորդավորված սպառման նպատակ: Այսինքն, հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցությունը կարող է դրսևորվել ինչպես տնտեսավարող սուբյեկտի կողմից անմիջապես սպառողին ապրանքն իրացնելու, այնպես էլ մեկ այլ տնտեսավարող սուբյեկտին ապրանքներ իրացնելու միջոցով:

***<u>Չորրորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-2-րդ մասերի համաձայն՝

1. Կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Կողմն իրավունք չունի ներկայացնելու այնպիսի ապացույցներ, որոնք չեն ներկայացվել վարչական վարույթի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից:

2. Վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները, բացառությամբ այն ապացույցների, որոնց վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես հակառակ կողմի միջոցով, և որոնք հակառակ կողմը չի ներկայացրել վարչական վարույթի ընթացքում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում է անձը: Ընդ որում, այն դեպքում, երբ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքները հերքող բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա այդ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը դրվում է նրա վրա:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունն անձը կարող է կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ապացույցներ ներկայացնելու միջոցով: Ընդ որում, այն դեպքում, երբ անձը վարչական վարույթի ընթացքում չի ներկայացնում իր օգտին առկա բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ, զրկվում է դրանք նույնիսկ դատական վարույթում ներկայացնելու հնարավորությունից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ներկայացնում է բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից:

Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթն իրականացնում է Հանձնաժողովի գործունեության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն օրենքով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի համար սույն օրենքով առանձնահատկություններ սահմանված չլինելու դեպքում համապատասխան հարաբերությունների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները:

Նման պայմաններում ակնհայտ է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականության վերաբերյալ կարգավորումները հավասարապես կիրառելի են տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթով պատասխանողի առնչությամբ, քանի որ այդ կապակցությամբ Օրենքը առանձնահատկություններ չի սահմանել:

***<u>Հինգերորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

Հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ **Օրենսգիրք**) 390-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներն են, ի թիվս այլնի, պանրի տեսակները և կաթնաշոռը (0406 ԱՏԳ ԱԱ ծածկագիր):

Օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման (այսուհետ սույն գլխում՝ նաև դրոշմավորում) պարտավորություն են կրում ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար» և «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգերով և ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող և (կամ) Հայաստանի Հանրապետությունում դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

2. Կազմակերպությունների (բացառությամբ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների) կամ անհատ ձեռնարկատերերի պատվերով դրոշմավորման ենթակա ապրանքներն այլ հարկ վճարողների կողմից արտադրվելու կամ շշալցվելու կամ այլ կերպ տարայավորվելու (փաթեթավորվելու) և պատվիրատուին վերադարձվելու դեպքում դրոշմավորման պարտավորությունը կրում է պատվիրատուն:

Օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքների դրոշմավորման համար նախատեսված ակցիզային դրոշմանիշերն ստացվում են մինչև այդ ապրանքների Հայաստանի Հանրապետություն ներմուծումը, իսկ Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակները՝ մինչև այդ ապրանքների օտարումը:

Օրենսգրքի 394-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ Օրենսգրքի 391-րդ հոդվածի 6-րդ մասում նշված հարկ վճարողները ապրանքների դրոշմավորումը կարող են իրականացնել ապրանքի արտադրության կամ օտարման նախապատրաստման ցանկացած փուլում՝ իրենց կողմից ընտրված տարածքում, բայց ոչ ուշ, քան մինչև այդ ապրանքների օտարումը:

Օրենսգրքի 394-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ արգելվում է ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների օտարումը կամ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը) այլ հարկ վճարողների, բացառությամբ «ժամանակավոր արտահանում» (ԵՏՄ անդամ պետությունների մասով՝ «մաքսային տարանցում») մաքսային ընթացակարգերով արտահանված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակներն օտարերկրյա պայմանադիր կողմին փոխանցելու, Օրենսգրքի 391-րդ հոդվածի 2-րդ մասում նշված՝ պատվիրատուի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ շշալցնող կամ այլ կերպ տարայավորող հարկ վճարողներին փոխանցելու, ինչպես նաև դրոշմավորման ծառայություն (գործողություն) մատուցող հարկ վճարողներին փոխանցելու դեպքերի:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից, ի թիվս այլ ապրանքների, պանրի տեսակների և կաթնաշոռի (0406 ԱՏԳ ԱԱ ծածկագիր) դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակները ստացվում են մինչև այդ ապրանքների օտարումը, ինչպես նաև արգելվում է ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների օտարումը կամ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը) այլ հարկ վճարողների, բացառությամբ «ժամանակավոր արտահանում» (ԵՏՄ անդամ պետությունների մասով՝ «մաքսային տարանցում») մաքսային ընթացակարգերով արտահանված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակներն օտարերկրյա պայմանադիր կողմին փոխանցելու, Օրենսգրքի 391-րդ հոդվածի 2-րդ մասում նշված՝ պատվիրատուի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ շշալցնող կամ այլ կերպ տարայավորող հարկ վճարողներին փոխանցելու, ինչպես նաև դրոշմավորման ծառայություն (գործողություն) մատուցող հարկ վճարողներին փոխանցելու դեպքերի:

Այսինքն, դրոշմավորման ենթակա ապրանքները դրոշմավորվում են բացառապես դրանք արտադրողի կամ ներմուծողի կողմից, կազմակերպությունների (բացառությամբ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների) կամ անհատ ձեռնարկատերերի պատվերով դրոշմավորման ենթակա ապրանքներն այլ հարկ վճարողների կողմից արտադրվելու կամ շշալցվելու կամ այլ կերպ տարայավորվելու (փաթեթավորվելու) և պատվիրատուին վերադարձվելու դեպքում ենթակա են դրոշմավորման պատվիրատուի կողմից՝ նրա դրոշմապիտակով, իսկ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներն առանց դրոշմապիտակով դրոշմավորման չեն կարող փոխանցվել այլ անձի, ինչպես նաև դրոշմապիտակներն առանց ապրանքի վրա փակցվելու չեն կարող օտարվել կամ փոխանցվել (տրամադրվել, հատկացվել) այլ հարկ վճարողների:

Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ ինքնակպչուն դրոշմապիտակների որակի մասով Ընկերությունը դիմել է ՊԵԿ-ին և ՊԵԿ-ը պատասխան գրությամբ վերահաստատել է, որ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներն առանց դրոշմապիտակով դրոշմավորման չեն կարող փոխանցվել այլ անձի:

Ստացվում է, որ արտադրողի կողմից այլ անձի ապրանք մատակարարելիս ապրանքն առանց դրոշմապիտակով դրոշմավորման հանձնելը և դրոշմապիտակն առանց ապրանքի վրա փակցնելու գնորդին փոխանցելը Օրենսգրքով արգելվում են:

***<u>Վերոշարադրյալ դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.</u>***

Հանձնաժողովը նախևառաջ ուշադրության է հրավիրում հետևյալին.

1. Թիվ 4392 գրությամբ Ընկերությունից պահանջված 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի մայիսի 22-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից արտադրված բոլոր պանիրների («Լոռի», «Չանախ» և այլն) և «Կաթ պարունակող մթերք պատրաստված կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով» բոլոր ապրանքների պիտակների ցանկում բացակայում է ««Պանիր Չեչիլ» 40% յուղ.», ««Պանիր Թել ապխտած» 50% յուղ.», ««Պանիր Թել» 40% յուղ.», ««Պանիր Թել ապխտած» 40% յուղ.», ««Պանիր Չեչիլ ապխտած» 50% յուղ.», ««Պանիր Թել» 45% յուղ.», ««Պանիր Թել» 50% յուղ.», ««Պանիր Լոռի Արարատ» 50% յուղ.», ««Պանիր Լոռի Կալինինո» 50% յուղ.», ««Պանիր Լոռի Ամասիա» 50% յուղ.», ««Պանիր Լոռի Լենինական» 50% յուղ.», ««Պանիր Մոցարելլա» 45% յուղ.», ««Պանիր Չեչիլ» 45% յուղ.», ««Պանիր Չեչիլ ապխտած» 45% յուղ.», ««Պանիր Սուլուգունի ապխտած» 50% յուղ.», ««Պանիր Լոռի կտրտած» 50% յուղ.», «Պանրային արտադրանք «Լոռի Աշոցք» 50% յուղ.», «Պանրային արտադրանք «Չանախ Արարատ» 50% յուղ.», «Պանրային արտադրանք «Չանախ Կալինինո» 50% յուղ.», «Պանրային արտադրանք «Չանախ» 47% յուղ.», «Պանրային արտադրանք «Արարատ» 50% յուղ.», «Պանրային արտադրանք «Դուստր Սիլվա» 50% յուղ.», «Պանրային արտադրանք «Լենինական» 50% յուղ.», «Պանրային արտադրանք «Լոռի» 50% յուղ.», «Պանրային արտադրանք «Չանախ Ամասիա» 50% յուղ.» և «Պանրային արտադրանք «Չանախ Արարատ» 50% յուղ.» ապրանքների պիտակները:

2. Թիվ 4392 գրությամբ Ընկերությունից պահանջված 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի մայիսի 22-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից արտադրված բոլոր պանիրների («Լոռի», «Չանախ» և այլն) և «Կաթ պարունակող մթերք պատրաստված կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով» բոլոր ապրանքների փաթեթվածքների ցանկում բացակայում է Ապրանքի փաթեթվածքը:

3. Ընկերությունը հայտնել է, որ Ապրանքի փաթեթավորման պատվերը կատարելուց հետո, Ապրանքը ԱՁ Ա. Հակոբյանին մատակարարել է հաշիվ ապրանքագրերով՝ պատվիրատուին նախապես տրամադրելով Ապրանքի վրա փակցվող պիտակի մակնշման օրինակը, մինչդեռ ԱՁ Ա. Հակոբյանի 2023 թվականի մայիսի 25-ին Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրության համաձայն՝ Ապրանքը Ընկերությունից ձեռք է բերել առանց մակնշման և պիտակի:

4. Ընկերությունը հայտնել է, որ թիվ 315-Ա որոշման հիման վրա իրականացված զննումից հետո Ընկերության ներկայացուցչի ներկայությամբ ունեցած քննարկումների ժամանակ ԱՁ Ա. Հակոբյանը հայտարարել է, որ Ընկերությունից ձեռք բերվածը «պանրային արտադրանք «Չանախ 50% յուղ.» ապրանք է, որի վրա սխալմամբ փակցրել է «Լոռի Excluzive» մակնշումով պիտակը, իսկ դրոշմապիտակը փաթեթվածքի վրա փակցրել է իր աշխատակիցը:

Մինչդեռ Օրենսգրքի 394-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ արգելվում է ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների օտարումը կամ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը) այլ հարկ վճարողներին: Ավելին, նշված դրոշմապիտակը նախատեսված է «Լոռի» տեսակի պանրի համար, այլ ոչ թե «պանրային արտադրանք «Չանախ 50% յուղ.» ապրանքի համար:

5. Ընկերությունը թիվ ՀԳ-02190/23 վարույթի առնչությամբ Հանձնաժողով ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է, որ «Կալինինո» ապրանքը Ընկերության կողմից արտադրված «Կաթ պարունակող կաթնային յուղի փոխարինիչով մթերք պատրաստված Չանախ պանրի տեխնոլոգիայով» պատրաստված մթերք է, մինչդեռ Ընկերությունը 2023 թվականի հոկտեմբերի 20-ին և 26-ին Հանձնաժողով ներկայացված գրություններով հայտնել է, որ Ընկերության կողմից արտադրվող կաթ պարունակող կաթնային յուղի փոխարինիչով պատրաստված պանրի տեխնոլոգիայով մթերքներն, այդ թվում՝ «Կալինինո» ապրանքն արտադրված չեն կոնկրետ տեսակի պանրի տեխնոլոգիայով:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը գտնում է, որ ընդհանուր առմամբ Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկությունները ամբողջականության և հավաստիության տեսանկյունից խնդրահարույց են:

Միաժամանակ Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

***1) Արդյո՞ք Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից:***

***2) Ապրանքն Ընկերության կողմից ԱՁ Ա. Հակոբյանին իրացված ո՞ր տեսակի ապրանքն է:***

***3) Արդյո՞ք Ընկերության կողմից Ապրանքը դրա մակնշվածքում անվանման, «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվության նշման և որպես արտադրող Ընկերության մասին տվյալների, ինչպես նաև պիտակի բացակայությամբ իրացնելը պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:***

***<u>Առաջին հարցադրման կապակցությամբ</u>.***

Թիվ 3630 գրությանը կից Ընկերությանն ուղարկվել են Ապրանքի լուսանկարները և այդ գրությամբ Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) արդյո՞ք կից ներկայացվող լուսանկարներում պատկերված ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից.

2) եթե այո, ապա ինչ ապրանքատեսակ է այն՝ նշելով ամբողջական անվանումը, և երբվանից է այն արտադրվում:

Միաժամանակ թիվ 3630 գրությամբ Ընկերությանը պարզաբանվել է նաև, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

Ընկերությունը 2023 թվականի ապրիլի 29-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ թիվ 3630 գրությանը կից ներկայացված լուսանկարներում պատկերված է ԱՁ Ա. Հակոբյանի պատվերով, Ընկերության կողմից փաթեթավորված ապրանքը:

Ընկերությունը հայտնել է նաև ապրանքատեսակի անվանումը՝ «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ»:

Արտադրվում է Ընկերության կողմից 2021 թվականի ապրիլի 8-ից, իսկ ԱՁ Ա. Հակոբյանի պատվերով փաթեթավորված ապրանքատեսակը՝ 2022 թվականի դեկտեմբերից:

Դիրքորոշում 2-ով Ընկերությունը հայտնել է, որ Ապրանքի վրա առկա պիտակավորումը և Ապրանքի փաթեթը որևէ կապ չունի Ընկերության հետ և չի բացառվում, որ Ապրանքը չի արտադրվել Ընկերության կողմից, բացի այդ Ընկերությունը նշելով ապրանքատեսակի անվանումը՝ «կաթ պարունակող կաթնային փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ», նկատի է ունեցել բացառապես իր կողմից արտադրված ապրանքը:

Այս համատեքստում Դիրքորոշում 2-ով Ապրանքն իր կողմից արտադրված չլինելու վերաբերյալ Ընկերության պնդումը հիմնավոր չէ այն պատճառաբանությամբ, որ այն Ընկերության կողմից ներկայացվել է այն բանից հետո, երբ Տեղեկանքն ուղարկվել է Ընկերությանը: Այլ կերպ ասած տվյալ պնդումն Ընկերությունն արել է պատասխանատվությունից ազատվելու հիմքեր ստեղծելու շարժառիթներով:

Նման պայմաններում Հանձնաժողովն արձանագրում է, որ Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից, իսկ ԱՁ Ա. Հակոբյանի այլ անձանց հետ աշխատելու հանգամանքը չունի որևէ նշանակություն:

***<u>Երկրորդ հարցադրման կապակցությամբ</u>.***

Սույն գործի փաստերի համաձայն.

1. Ապրանքի պիտակի վրա առկա է հետևյալ մակնշումը. ««Շիրակ», «Լոռի Excluzive», «09 NOV 2022», «պատրաստված է անարատ կաթից», «յուղայնությունը 50%», Բաղադրությունը՝ կովի անարատ պաստերիզացված կաթ 100%, կերակրի աղ, կալցիումի քլորիդ, բնական ներկանյութ աննատո (E160b), բակտերիալ կուլտուրա, շրդանաֆերմենտ, էներգետիկ արժեքը 100գ. ում՝ 331կկալ/1385կՋ, Սննդային արժեքը 100 գ.-ում՝ ճարպեր 28գ., սպիտակուցներ 22գ., աղ 3.5-4.5գ.: Պահպանման ժամկետը +20C +50C ջերմաստիճանում 6 ամիս, Արտադրող «Ոսկե Սեր» ՍՊԸ, ՀՀ, Շիրակի մարզ, գ. Աշոցք: Հեռ. 091-49-63-33».

2. «Պար-Արտ» ընկերության կողմից ներկայացված Ապրանքի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենների համաձայն՝ ԱՁ Ա. Հակոբյանի կողմից Ապրանքը «Պար-Արտ» ընկերությանը մատակարարվել է որպես «Լոռի» անվանումով պանիր.

3. Ըստ ԱՁ Ա. Հակոբյանի գրավոր բացատրության՝ ԱՁ Ա. Հակոբյանի կողմից **«Լոռի Excluzive»** անվանումով Ապրանքի վրա փակցված պիտակները տարբերվում է միայն արտադրողի տվյալներով, այսինքն՝ Ապրանքի տեսակի մասով դրա պիտակի վրա առկա տեղեկությունները ճիշտ են.

4. Ապրանքի դրոշմապիտակի համաձայն՝ Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից որպես «Լոռի» պանիր.

5. Թիվ 1411 փորձարկման արձանագրության համաձայն՝ Ապրանքում առկա է բուսական յուղ և հանդիսանում է «Կաթ պարունակող մթերք կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով» ապրանք.

Լաբորատոր հետազոտության շրջանակներում Ապրանքի ձևի, չափի և զանգվածի ստուգման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

| Ապրանքի չափսերը, սմ | Ապրանքի ձևը՝ քառակուսի հիմքերով չորսվակ |
|---|---|
| Երկարությունը | 29.0 |
| Լայնությունը | 13.5 |
| Բարձրությունը | 10.0 |
| Զանգվածը, կգ | 4.380 |

6. ՊՈԱԿ-ը ներկայացրել է «Չանախ» և «Լոռի» պանիրների զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշները՝ համաձայն հայկական ազգային ստանդարտների պահանջների (ՀՍՏ 377-2016 և ՀՍՏ 378-2016).

7. Թիվ 1411 փորձարկման արձանագրության հիման վրա Պանիր «Լոռի» ապրանքատեսակի համար հաստատված ազգային ստանդարտի՝ ՀՍՏ 378-2016 նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշների համեմատության արդյունքում Ապրանքի լայնության և կերակրի աղի զանգվածային մասի վերաբերյալ ցուցանիշներն ավելի, իսկ երկարության, բարձրության, յուղի զանգվածային մասի, խոնավության զանգվածային մասի վերաբերյալ ցուցանիշներն համապատասխանում են պանիր «Լոռի» ապրանքատեսակի համար հաստատված ազգային ստանդարտի (ՀՍՏ 378-2016) նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշներին (տե՛ս ստորև ներկայացված Աղյուսակում):

| Աղյուսակ | | | | |
|---|---|---|---|---|
| | **Լոռի** | **Չանախ** | **Փորձաքննության արդյունքներ** | **Համապատասխանություն** |
| Երկարությունը | 28.0-30.0 | 18.0-20.0 | 29.0 | Համապատասխանում է Լոռիին |
| Լայնությունը | 14.0-15.0 | 18.0-20.0 | 13.5 | Առավել համապատասխանում է Լոռիին |
| Բարձրությունը | 10.0-12.0 | 18.0-20.0 կամ 11.0-15.0 | 10.0 | Համապատասխանում է Լոռիին |
| Յուղի զանգվածային մասը՝ վերահաշված ըստ չոր նյութի, % ոչ պակաս (ըստ յուղայնության) | 45.0 % յուղայնության դեպքում՝ 45.0 ± **1.6, 50.0** % յուղայնության դեպքում՝ 50.0 ± **1.6** | 40.0 % յուղայնության դեպքում՝ 40.0 ± **1.6, 47.0** % յուղայնության դեպքում՝ 47.0 ± **1.6** | 48.8 | Համապատասխանում է Լոռիին |
| Խոնավության զանգվածային մասը, % ոչ ավելի (ըստ յուղայնության) | 44.0 | 40.0 % յուղայնության դեպքում՝ 52,0, **47.0** % | 44.4 | Համապատասխանում է Լոռիին |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | յուղայնության դեպքում՝ 49,0 | | |
| Կերակրի աղի զանգվածային մասը, % | 3.5-4.5 | 4.0-7.0 | 3.8 | Առավել համապատասխանում է Լոռիին |

Ստացվում է, որ Ապրանքն Ընկերության կողմից ԱՁ Ա. Հակոբյանին իրացված «Լոռի» տեսակի պանիրն է, որում արձանագրվել է բուսական յուղի առկայություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը փաստում է, որ Ընկերության կողմից բուսական յուղի առկայությամբ Ապրանքը որպես «Լոռի» տեսակի պանիր իրացնելը կարող է.

1. հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման), քանի որ սպառողը Ապրանքը գնելիս մոլորության արդյունքում այն ձեռք է բերում որպես պանիր.

2. սպառողներին հնարավորություն չտալ ամբողջական պատկերացում կազմել Ապրանքի վերաբերյալ, քանի որ Ապրանքի մակնշվածքում բացակայում է դրա անվանումը, «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվությունը և որպես արտադրող Ընկերության մասին տվյալները, ինչպես նաև Ապրանքն իրացվել է առանց պիտակի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը փաստում է, որ Ընկերության կողմից բուսական յուղի առկայությամբ Ապրանքն ԱՁ Ա. Հակոբյանին որպես «Լոռի» տեսակի պանիր իրացնելը պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

Ավելին, նույնիսկ եթե հիմք ընդունվի Ընկերության պնդումը, որ ինքն Ապրանքն իրացրել է որպես «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով ապրանք, ապա Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Թիվ 1411 փորձարկման արձանագրության համաձայն՝ Ապրանքում առկա է բուսական յուղ և հանդիսանում է «Կաթ պարունակող մթերք կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով» ապրանք:

Լաբորատոր հետազոտության շրջանակներում Ապրանքի ձևի, չափի և զանգվածի ստուգման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

| **Ապրանքի չափսերը, սմ** | **Ապրանքի ձևը՝ քառակուսի հիմքերով չորսվակ** |
|---|---|
| Երկարությունը | 29.0 |
| Լայնությունը | 13.5 |
| Բարձրությունը | 10.0 |
| Զանգվածը, կգ | 4.380 |

ՊՈԱԿ-ը ներկայացրել է «Չանախ» և «Լոռի» պանիրների զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշները՝ համաձայն հայկական ազգային ստանդարտների պահանջների (ՀUS 377-2016 և ՀUS 378-2016):

Թիվ 1411 փորձարկման արձանագրության հիման վրա Պանիր «Չանախ» ապրանքատեսակի համար հաստատված ազգային ստանդարտի՝ ՀՍՏ 377-2016 նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշների համեմատության արդյունքում Ապրանքի լայնության և կերակրի աղի զանգվածային մասի վերաբերյալ ցուցանիշներն ավելի, իսկ երկարության, բարձրության, յուղի զանգվածային մասի, խոնավության զանգվածային մասի վերաբերյալ ցուցանիշները չեն համապատասխանում պանիր «Չանախ» ապրանքատեսակի համար հաստատված ազգային ստանդարտի (ՀՍՏ 377-2016) նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշներին (տե՛ս ստորև ներկայացված Աղյուսակում):

**Աղյուսակ**

| | Լոռի | Չանախ | Փորձաքննության արդյունքներ | Համապատասխանություն |
|---|---|---|---|---|
| Երկարությունը | 28.0-30.0 | 18.0-20.0 | 29.0 | Չի Համապատասխանում Չանախին |
| Լայնությունը | 14.0-15.0 | 18.0-20.0 | 13.5 | Չի համապատասխանում Չանախին |
| Բարձրությունը | 10.0-12.0 | 18.0-20.0 կամ 11.0-15.0 | 10.0 | Չի համապատասխանում Չանախին |
| Յուղի զանգվածային մասը՝ վերահաշված ըստ չոր նյութի, % ոչ պակաս (ըստ յուղայնության) | 45.0 % յուղայնության դեպքում՝ 45.0 ± 1.6, 50.0 % յուղայնության դեպքում՝ 50.0 ± 1.6 | 40.0 % յուղայնության դեպքում՝ 40.0 ± 1.6, 47.0 % յուղայնության դեպքում՝ 47.0 ± 1.6 | 48.8 | Չի համապատասխանում Չանախին |
| Խոնավության զանգվածային մասը, % ոչ ավելի (ըստ յուղայնության) | 44.0 | 40.0 % յուղայնության դեպքում՝ 52,0, 47.0 % յուղայնության դեպքում՝ 49,0 | 44.4 | Չի համապատասխանում Չանախին |
| Կերակրի աղի զանգվածային մասը, % | 3.5-4.5 | 4.0-7.0 | 3.8 | Չի համապատասխանում Չանախին |

Աղյուսակում նշված ցուցանիշների համաձայն՝ Ապրանքը չի համապատասխանում «Չանախ» տեսակի պանրի ցուցանիշներին:

Ավելին, Ընկերությունը թիվ ՀԳ-02190/23 վարույթի շրջանակում 2023 թվականի հոկտեմբերի 20-ին և 26-ին Հանձնաժողով ներկայացված գրություններով, ի թիվս այլնի, հայտնել է, որ Ընկերության կողմից արտադրվող կաթ պարունակող կաթնային յուղի

փոխարինիչով պատրաստված պանրի տեխնոլոգիայով մթերքներն արտադրված չեն կոնկրետ տեսակի պանրի տեխնոլոգիայով, այսինքն՝ Ապրանքն արտադրված չէ «Չանախ» տեսակի պանրի տեխնոլոգիայով:

Ստացվում է, որ Ապրանքը «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով իրացնելու պարագայում, սպառողի մոտ տպավորություն է առաջանում, որ այն արտադրված է «Չանախ» տեսակի պանրի տեխնոլոգիայով և համապատասխանում է «Չանախ» տեսակի պանրի ցուցանիշներին, այնինչ՝ դա այդպես չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը փաստում է, որ Ընկերության կողմից Ապրանքը «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով իրացնելու պարագան, այն դեպքում, երբ Ապրանքն արտադրված չէ «Չանախ» տեսակի պանրի տեխնոլոգիայով և չի համապատասխանում «Չանախ» տեսակի պանրի ցուցանիշներին, ևս կարող է.

1. հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման), քանի որ սպառողն Ապրանքը գնելիս մոլորության արդյունքում այն կարող էր ձեռքբերել որպես «Չանախ» տեսակի պանրի տեխնոլոգիայով արտադրված և «Չանախ» տեսակի պանրի ցուցանիշներին համապատասխանող ապրանք.

2. սպառողներին հնարավորություն չտալ ամբողջական պատկերացում կազմել Ապրանքի վերաբերյալ, քանի որ Ապրանքի մակնշվածքում բացակայում է դրա անվանումը, «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվությունը և որպես արտադրող Ընկերության մասին տվյալները, ինչպես նաև Ապրանքն իրացվել է առանց պիտակի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Ընկերության կողմից Ապրանքը «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով իրացնելու պարագան, այն դեպքում, երբ Ապրանքն արտադրված չէ «Չանախ» տեսակի պանրի տեխնոլոգիայով և չի համապատասխանում «Չանախ» տեսակի պանրի ցուցանիշներին, ևս պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

***<u>Երրորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

Սույն գործի փաստերի համաձայն.

1. Ընկերությունը հայտնել է, որ Ապրանքն ԱՁ Ա. Հակոբյանին իրացրել է առանց պիտակավորման՝ նրան տրամադրելով Ապրանքի վրա փակցվող պիտակի մակնշման օրինակը:

2. ԱՁ Ա. Հակոբյանի 2023 թվականի մայիսի 25-ին Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրության համաձայն՝ Ապրանքը Ընկերությունից ձեռք է բերել առանց մակնշման և պիտակի:

Այսպիսով, անվիճելի է այն փաստը, որ Ընկերության կողմից Ապրանքը ԱՁ Ա. Հակոբյանին իրացվել է առանց պիտակի և առանց մակնշման:

Ընկերության կողմից Ապրանքի մակնշվածքում նշված չէ, որ դրանում առկա է բուսական յուղ, մինչդեռ թիվ 1411 արձանագրության համաձայն՝ Ապրանքում հայտնաբերվել է բուսական յուղ որպես ինքնուրույն բաղադրամաս, ինչպես նաև Ապրանքի մակնշվածքում բացակայում է դրա անվանումը և «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվության նշումը, որպես արտադրող Ընկերության մասին տվյալները, ինչպես

նաև Ապրանքն իրացվել առանց պիտակի: Այսինքն, Ապրանքի մեջ բուսական յուղի առկայության վերաբերյալ տեղեկատվության բացակայության պայմաններում, բացառապես լաբորատոր փորձաքննության միջոցով է հնարավոր տեղեկանալ դրանում բուսական յուղի առկայության մասին:

Նշվածից բխում է, որ Ապրանքի գնման ժամանակ սպառողներն Ապրանքի բաղադրության մեջ բուսական յուղի առկայության մասին որևէ կերպ չեն կարող տեղեկանալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության կողմից Ապրանքը դրա մակնշվածքում անվանման, «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվության նշման, որպես արտադրող Ընկերության մասին տվյալների, ինչպես նաև պիտակի բացակայությամբ իրացնելը կարող է.

1. հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման), քանի որ սպառողը Ապրանքը գնելիս մոլորության արդյունքում այն ձեռք է բերում որպես պանիր.

2. սպառողներին հնարավորություն չտալ ամբողջական պատկերացում կազմել Ապրանքի վերաբերյալ, քանի որ Ապրանքի մակնշվածքում բացակայում է դրա անվանումը, «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվությունը և արտադրող Ընկերության մասին տվյալները, ինչպես նաև Ապրանքն իրացվել է առանց պիտակի:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից Ապրանքի պիտակի օրինակը ԱՁ Ա. Հակոբյանին փոխանցելուն, ապա Հանձնաժողովը փաստում է հետևյալը.

Կանոնակարգի 66-րդ կետի համաձայն՝ կաթը և կաթնամթերքը պետք է ուղեկցվեն սպառողների համար այնպիսի տեղեկատվությամբ, որը համապատասխանում է «Սննդամթերքի մակնշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 022/2011) (այսուհետ նաև՝ **«Սննդամթերքի մակնշման մասին» կանոնակարգ**) պահանջներին և նույն տեխնիկական կանոնակարգի լրացուցիչ պահանջներին:

«Սննդամթերքի մակնշման մասին» կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.12-րդ մասի 6-րդ պարբերության համաձայն՝ սույն հոդվածի 4.1 մասի 1-ին կետի 1-ին, 4-6-րդ ենթակետերով և 4.4 մասի 13-րդ կետով նախատեսված տեղեկությունները պետք է զետեղվեն սպառողական փաթեթվածքի և(կամ) այնպիսի պիտակի վրա, **որի հեռացումը սպառողական փաթեթվածքից պետք է դժվար լինի:**

«Սննդամթերքի մակնշման մասին» կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.1 մասի 1-ին կետի 1-ին, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի համաձայն՝ տրանսպորտային փաթեթվածքի մակնշվածքը, որում տեղադրված է սննդամթերքը, պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) սննդամթերքի անվանումը.

4) սննդամթերքի պիտանիության ժամկետը.

5) սննդամթերքի պահպանման պայմանները.

6) տեղեկություններ, որոնցով հնարավոր է նույնականացնել սննդամթերքի խմբաքանակը (օրինակ՝ խմբաքանակի համարը):

«Սննդամթերքի մակնշման մասին» կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4 մասի 13-րդ կետի համաձայն՝ բաղադրիչները (այդ թվում՝ սննդային հավելումները, բուրավետիչները), կենսաբանական ակտիվ հավելումները, որոնց օգտագործումը կարող է առաջացնել ալերգիկ ռեակցիաներ կամ հակացուցված է հիվանդությունների առանձին տեսակների

դեպքում, և որոնք ներկայացված են սույն հոդվածի 4.4 մասի 14-րդ կետում, նշվում են սննդամթերքի բաղադրության մեջ՝ անկախ դրանց քանակությունից:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից ապրանքը պետք է իրացվի այնպիսի սպառողական փաթեթվածքով և (կամ) պիտակով, որոնց մակնշվածքը պարունակում է հետևյալ տեղեկությունները. սննդամթերքի անվանումը, պիտանիության ժամկետը, պահպանման պայմանները, բաղադրիչները, ինչպես նաև տեղեկություններ, որոնցով հնարավոր է նույնականացնել սննդամթերքի խմբաքանակը (օրինակ՝ խմբաքանակի համարը): **Ընդ որում, նշված տեղեկատվությունը պետք է զետեղվի այնպիսի պիտակի վրա, որի հեռացումը սպառողական փաթեթվածքից դժվար է:**

Այսպիսով, Ընկերության կողմից Ապրանքը ԱՁ Ա. Հակոբյանին առանց պիտակի և առանց մակնշման իրացնելը հանդիսանում է օրենսդրության խախտում:

Ավելին, Ընկերությունը Ապրանքի պիտակի օրինակը ԱՁ Ա. Հակոբյանին փոխանցելու վերաբերյալ ապացույցներ չի ներկայացրել:

ԱՁ Ա. Հակոբյանի կողմից ապրանքները գնելուց հետո դրանց վերավաճառքին հետևելու պարտավորություն չկրելու վերաբերյալ Ընկերության պնդման առնչությամբ Հանձնաժողովը նախևառաջ անհրաժեշտ է համարում բացահայտել «արտադրող» հասկացության և արտադրողի պատասխանատվությանն առնչվող օրենսդրության դրույթների բովանդակությունը:

Այսպես, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ (...) արտադրողն իրացման համար ապրանքներ արտադրող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերն է:

«Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ արտադրող է համարվում ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը նախագծում և (կամ) արտադրում է որևէ արտադրանք կամ ունի նախագծված և (կամ) արտադրված արտադրանք՝ սեփական անվանմամբ կամ իր ապրանքային նշանի անվանմամբ շուկայահանման նպատակով:

«Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ արտադրանքի շուկայահանումը (շուկայում հասանելի դարձնելը)՝ գործողություն է, որն ուղղված է շուկայում նոր արտադրանքի առկայության ապահովմանը, նաև պահպանմանը՝ տարածման, արտադրանքի վճարովի կամ անհատույց փոխանցման նպատակով:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է ժամանակին սպառողին տրամադրել ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն, որն ապահովում է դրանց ճիշտ ընտրության հնարավորությունը(…):

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սպառողների իրավունքների խախտման համար վաճառողը (արտադրողը, կատարողը) կրում է օրենքով և (կամ) պայմանագրով նախատեսված պատասխանատվություն:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքի թերության հետևանքով պատճառված վնասը տուժողի ընտրությամբ ենթակա է հատուցման՝ վաճառողի կամ ապրանքն արտադրողի կողմից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1089-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքի թերությունների հետևանքով պատճառված վնասը տուժողի ընտրությամբ ենթակա է հատուցման վաճառողի կամ ապրանք արտադրողի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալ նորմերը՝ Հանձնաժողովը գտնում է, որ արտադրող է համարվում ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով շուկայում տվյալ ապրանքի առկայության նպատակով իրականացնում է որևէ ապրանքի արտադրություն: Ապրանք արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է սպառողին տրամադրել ստույգ տեղեկատվություն, իսկ արտադրանքի հետ կապված ցանկացած թերության կամ տեղեկատվության հետ կապված խնդիրների համար կրում է պատասխանատվություն:

Վերոշարադրյալ կարգավորումների լույսի ներքո անդրադառնալով տվյալ գործին՝ ակնհայտ է, որ Ընկերությունը Ապրանքն արտադրողն է, Ապրանքն արտադրվել է իրացնելու նպատակով, հետևաբար Ապրանքի հետ կապված ցանկացած թերության կամ տեղեկատվության հետ կապված խնդիրների համար կրում է պատասխանատվություն, անկախ այն հանգամանքից Ապրանքն անմիջապես, թե միջնորդավորված տարբերակով է հասնում սպառողին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը փաստում է, որ Ընկերության կողմից Ապրանքը դրա մակնշվածքում անվանման, «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվության և որպես արտադրող Ընկերության մասին տվյալների, ինչպես նաև պիտակի բացակայությամբ իրացնելը պարունակում է հասարակության մոլորության դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

Ամփոփելով ողջ վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերության կողմից բուսական յուղի առկայությամբ Ապրանքը բաղադրությանը և արտադրման տեխնոլոգիային չհամապատասխանող անվանմամբ, դրա մակնշվածքում անվանման, «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվության և որպես արտադրող Ընկերության մասին տվյալների, ինչպես նաև պիտակի բացակայությամբ իրացնելն ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ, որի համար օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում:

***<u>2) Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.</u>***

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված

տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանության (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) 1-ին կետի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 9-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկում է հետևյալ բանաձևով.

$$Տ = Բ + Բ \times (Ծ - Մ)$$

Որտեղ՝

Տ-տուգանքի չափ,

Բ-տուգանքի բազային գումար,

Ծ-ծանրացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումար,

Մ-մեղմացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն:

***<u>Բազային գումարի հաշվարկը.</u>***

Մեթոդաբանության 11-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող մեթոդը վերաբերում է անբարեխիղճ մրցակցությանը, բացառությամբ ակցիաների:

Մեթոդաբանության 21-րդ կետի համաձայն՝ երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող տուգանքի բազային գումարը հաշվարկվում է Բ = Հ x 2.5% x Ժ բանաձևով, որտեղ՝

Բ-ն տուգանքի բազային գումարն է,

Հ-ն ապրանքի իրացումից ստացված հասույթն է կամ ընդհանուր հասույթի կեսն է,

Ժ-ն իրավախախտման տևողության գործակիցն է:

*Ապրանքի իրացումից ստացված հասույթ.*

Մեթոդաբանության 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ապրանք է համարվում տվյալ իրավախախտման առնչությամբ Հանձնաժողովի կողմից հատկորոշված ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանում ներգրավված ապրանքը, իսկ ապրանքային շուկա հատկորոշված չլինելու դեպքում՝ ապրանքը, որն իրավախախտման հետևանքով ստացել է կամ կարող էր ստանալ իրացման համար առավելություն, իսկ դա որոշելու անհնարինության դեպքում՝ Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 875-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով նախատեսված դասակարգչի, ըստ հաջորդականության, ենթակարգում, ենթակարգում առանձնացված չլինելու դեպքում՝ կարգում, կարգում առանձնացված չլինելու դեպքում՝ դասում և դասում առանձնացված չլինելու դեպքում՝ խմբում ներառված ապրանքը:

Մեթոդաբանության 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ համապատասխան ժամանակահատվածը Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին դադարեցված իրավախախտումների դեպքում՝ իրավախախտման դադարեցմանը նախորդող տարին է: Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին չդադարեցված իրավախախտումների դեպքում՝ Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարին է: Իրավախախտման դադարեցման կամ վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարում 12 ամբողջական ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրավախախտման դադարեցման կամ վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող, բայց ոչ ավել քան 12 ամբողջական ամսվա գործունեության ժամանակահատվածն է:

Մեթոդաբանության 22-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար հիմք ընդունվող հասույթի ընտրությունն իրականացվում է Մեթոդաբանության 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերով սահմանված կարգով:

Մեթոդաբանության 15-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում ապրանքի իրացումից ստացված հասույթը:

Մեթոդաբանության 16-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար ապրանքի իրացումից ստացված հասույթի փոխարեն հիմք է ընդունվում ընդհանուր հասույթը, եթե.

1) իրավախախտումը չի առնչվում որևէ ապրանքի հետ.

2) կիրառվող բազային գումարը հաշվարկվում է անձանց խմբում ընդգրկված այն տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ, որը չունի ապրանքի իրացումից ստացված հասույթ.

3) պետական մարմնից ստացված տեղեկատվության հիման վրա հնարավոր չէ գնահատել ապրանքի իրացումից ստացված հասույթը և տնտեսավարող սուբյեկտը չի

ներկայացրել ապացույցներ ընդհանուր հասույթի, ապրանքի իրացումից ստացված հասույթի և դրանց գոյացման հիմքերի վերաբերյալ:

Մեթոդաբանության 17-րդ կետի համաձայն՝ եթե ապրանքի իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի վերաբերյալ պետական մարմնից ստացված տեղեկատվությունը ներառում է համապատասխան ժամանակահատվածը չընդգրկող ամիսներ և առանձնացված չեն համապատասխան ժամանակահատվածում ներառված ամիսներին ստացված հասույթները, ապա տուգանքի բազային գումարի հաշվարկման համար համապատասխան ժամանակահատվածը չընդգրկող ամիսների հասույթը նվազեցվում է: Նվազեցվող հասույթի գումարը յուրաքանչյուր ամսվա համար հավասար է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հասույթի գումարի և այդ ժամանակաշրջանում ներառված ամիսների հարաբերակցությանը:

*Իրավախախտման տևողությունը.*

Մեթոդաբանության 19-րդ կետի համաձայն՝ իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Ժ = Ա/12$$

Որտեղ՝

Ժ-ն իրավախախտման տևողության գործակիցն է.

Ա-ն դիտարկվող ժամանակահատվածն է:

Մեթոդաբանության 20-րդ կետի համաձայն՝ եթե դիտարկվող ժամանակահատվածը չի գերազանցում 12 ամբողջական ամիսը, ապա իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է 1, իսկ եթե դիտարկվող ժամանակահատվածը 60 ամբողջական ամսից ավելի է, իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է 5:

*Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.*

Մեթոդաբանության 31-32-րդ կետերով և 39-40-րդ կետերով սահմանված են երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովի կողմից գնահատման ենթակա այլ հանգամանքներ առկա չեն:

***<u>Տուգանքի հաշվարկը</u>.***

Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքի չափը կազմում է 32 298 382 ՀՀ դրամ՝ համաձայն հետևյալ հաշվարկի.

Տ= Բ + Բ x (Ծ - Մ) = + x ( %- %) = 32 298 382 ՀՀ դրամ:

Մեթոդաբանության 10-րդ կետի համաձայն՝ տուգանքի վերջնական գումարը կլորացվում է դեպի ներքև 1000 ՀՀ դրամի ճշգրտությամբ, հետևաբար, Ընկերության նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է 32 298 000 (երեսուներկու միլիոն երկու հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ:

***3) <u>Ընկերությանը հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ</u>.***

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Տվյալ պարագայում հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցությունը դրսևորվել է Ընկերության կողմից 2022 թվականի նոյեմբերի 9-ին արտադրված Ապրանքն իրացնելու միջոցով, որի պիտանելիության ժամկետը 180 օր է, հետևաբար սույն որոշման ընդունման օրվա դրությամբ դիտարկվող խմբաքանակի ապրանք չի կարող գտնվել շրջանառության մեջ, որպիսի պայմաններում Ընկերությանը հանձնարարություն տալու անհրաժեշտությունը բացակայում է:

***<u>7. Եզրափակիչ մաս.</u>***

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 100-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2022 թվականի նոյեմբերի 9-ին արտադրված բուսական յուղի առկայությամբ ապրանքը բաղադրությանը և արտադրման տեխնոլոգիային չհամապատասխանող անվանմամբ, դրա մակնշվածքում անվանման, «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվության և որպես արտադրող «Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասին տվյալների, ինչպես նաև պիտակի բացակայությամբ իրացնելն ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ որակել որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն (այսուհետ նաև՝ **Օրենքի խախտում**):

2. Օրենքի խախտման համար «Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել 32 298 000 (երեսուներկու միլիոն երկու հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամի չափով տուգանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշման 2-րդ կետով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 28
Երևան